№ 12 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 19

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 19 № 12

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐ. ԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1907** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարոնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Յունվարի լոյս 17-ի գիշերը, ծանր և կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանվեց

Ալեքսանդր Դաւթեան Մաղաթեանցը

Հոգեկան ծանր վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին. Եղիսաբէթ Իւանովնա, Գէորգ, Նիկողայոս և Եւգէնիյ Ա. Մաղաթեանները, Մարիամ Դաւթեան Մելիք-Շահնազարեանը, Օսաննա Արէշեանը իր աղջկերանցով—Դարիա և Եկատերինա, Աննա Վասիլեվնա և Մարգարիտ Գրիգորեվնա Մաղաթեանները, առաջինը՝ իր անմոռաց ամուսնու, երկրորդները՝ իրանց թանկագին հօր, երրորդը՝ եղբօր, չորրորդը՝ փեսայի և վերջինները՝ սկեսայրի մահվան մասին։ Ամբիծքը ուրբաթ, յունվարի 19-ին, երեկոյեան ժամը 6-ին։ Յուղարկաւորութիւնը շաբաթ, յունվարի 20-ին, առաւօտեան ժամը 10-ին, իր բնակարանից՝ Հալաբարում, Պրեօբրաժենսկայա փող. № 6, դէպի Շամքոռեցոց եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

Բացված է բաժանորդագրութիւն

ՀԱՅԵԼԻ

Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որը երբեմնապէս լոյս կը տեսնի «Հայելիի յաւելուած» անուան տակ։

Տարեկան բաժանորդները կը ստանան՝

1) 50 № «Հայելի»։ 2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը առանձին ալբոմ կը կազմեն։ 3) 2 մեծադիր գունաւոր պատկեր հայկական կեանքից (50×60 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատկական համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին)։ 4) 1 պատի տախտակ պատկերազարդ Օրացոյց 1908 թ.։ 5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբակային նկարը։

Բաժանորդագրութեան տարին է Նոյեմբերից նոյեմբեր։

Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 րուբ.։ Կէս տարին՝ 2 ր., դուրսը՝ 2 ր. 50 կոպ.։ Երեք ամիսը՝ 1 ր., դուրսը 1 ր. 25 կ.։ Արտասահման՝ տարեկան 6 րուբլի, կէս տարին 3 րուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3. կամ Tiflis, édaction du journal «Haeli».

Խմբագիր՝ Վ. Պետրոսեան, Հրատարակիչ՝ Բ. Ճէպէյեան

(ա. օ.) առ. 7—10

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալեքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԴՆԷՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.
Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.
Բժ. Մ. Ի. ԽԱՆՁԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բկի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.։
Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.
Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բկի և ականջի, երկ. բեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.
Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիպնօզով ամենայն 4—5 ժ.
Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.
Բժ. Ա. Տ. ՌՕԶՄԱՒՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք 4—5 ժ., երեք. շաբ. 3—4 ժ.։
Բժ. Ն. Ի. ՆԷՈՒՅՄԻՆ.—Աչքի, երկ., ուրբ., 12—1 ժ.
Բժ. Ա. Ա. ՆՈՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ., չորեքշ., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.։
Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.
Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ } կլինիքական անալիզ
Բժ. Կ. Ի. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ }
Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, էլեքտր. 4—6 ժամ.
Մ. Ե. ԳՈՐՈԴԵՑԿԱ.—Մասաժ. 11—4. ժ.
Ս. ԽԱ. ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.
Բժ. Կ Գ, ԴՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամեն օր 12—1 ժամը։
Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երեխ., երեքշ., հինգշ. շաբ. —5 ժամը։

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անզգամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, ատամների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 45—144

Քաղաքային Վարչութիւնը

կրկին յիշեցնում է Թիֆլիս քաղաքի տանտէրերին, որ աչքի առաջ ունենալով քաղաքային գանձարանի կրիտիքական դրութիւնը, նրանց տների ջրմուղների վճարների յետաձգելը և նրանց տներում ջրմուղներ կառուցելը ոչ մի դէպքում չի թոյլատրվի, մինչև որ նրանց՝ մինչև 1907 թւի յունվարի 1-ը ստանալիք վճարները չը մտցնվեն քաղաքի գանձարկղը։

Ուստի քաղաքային վարչութիւնը խնդրում է այն բոլորին, որոնց այս վերաբերում է, ժամանակը չը կորցնելու համար չը դիմել նրան ոչ բերանացի, ոչ էլ գրաւոր խնդիրներով, որովհետև այդպիսիները առանց հետևանքի կը մնան։ 1—1

ԲԺԻՇԿ

Տ. Ա. Իսաբաեկեան

ՄԱՍՆԱԳԷՏ՝
ներքին եւ վեներական
հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ.
երեկոյեան 5—7 ժ.

Սօլօլակ, Սերգիեվսկայա 15, Փրիդոնովի տանը։

առ. (չ.ու.չ.) 29—100

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համախմբումներ. Վերջին տեղեկութիւններ. Ընտրութիւնները Կովկասում. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Մամուլ. Բժ. Ն. Խուդադեան. Երկուսից որին. Ժահրոտ լոգիկա. Նամակ Պետերբուրգից. Կուսակցութիւնների և դաշնակցութիւնների շուրջը. Նոր փոխառութեան հարցը Ֆրանսիայում. Կոչման բարձրութեան վրա. Թիֆլիսի ժողովարան. Առաջնորդական ընտրութիւն. Նամակ Ախալքալաքից. Նամակ Ղուբայից. Նամակ Եւպատորիայից. Օրամիջեայ դպրոցների մասին. Ներկայացուցչական կառավարութիւն. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՀԱՄԱԽՄԲՈՒՄՆԵՐ

IX

—Ո՞ւմ հետ դաշն կապել ներկայ ընտրութիւնների ժամանակ։

Այդ հարցը հետաքրքրական է դարձել շատ տեղերի և մասնաւորապէս Թիֆլիսի համար։

Մենք կը խօսենք Թիֆլիսի մասին և կանգ կառնենք այն կուսակցութեան վրա, դէպի որը մենք համակրութիւն ունենք։

Դա հայ ռամկավարական կամ նոյնն է ժողովրդական ազատութեան կուսակցութիւնն է։

Գործէ՞ արդեօք այդ միացեալ կուսակցութիւնը անկախ ուրիշներից, թէ՞ դաշն կապէ այնպիսի կուսակցութիւնների հետ, ինչպէս են դաշնակցական, սօցիալ-դեմօկրատական և սօցիալ-յեղափոխական կազմակերպութիւնները։

Նախ քան պատասխանենք այդ հարցին՝ մենք պարզենք մի ուրիշ խնդիր, թէ երբ և ինչ դիտումներով դաշն են կապում միմեանց հետ քաղաքական կազմակերպութիւնները կամ կուսակցութիւնները։

Դա կարևոր խնդիր է, որովհետև դա է որոշում այդ դաշների նպատակայարմարութիւնը և գործնական նշանակութիւնը։

X

Ընտրութիւնների մէջ մասնակցող մարդիկ երկու հայեցակէտներ կարող են ունենալ՝ կամ ձգտել մի դրական հետևանքի և կամ խոչընդոտ լինել մի բացասական երևոյթի։

Ուրիշ խօսքով՝ ընտրողները կարող են ձգտել ընտրելու իրանց ցանկացած համակրելի թեկնածուին, կամ՝ եթէ այդ դժուար է նրանց համար՝ ձգտել, որ գոնէ չընտրվեն անպայման անհամակրելի թեկնածուներ։

Եթէ մի կուսակցութեան պատկանող մարդիկ այնքան համախոհներ ունեն, որ կարող են համարձակ կերպով անցկացնել իրանց թեկնածուներին, նրանք կարիք էլ չունեն դաշն կապելու ուրիշ կուսակցութիւնների հետ։ Այդպէս, օրինակ, մտածում են Թիֆլիսում սօցիալ-դեմօկրատները, չափազանց վստահ լինելով իրանց ուժի և առաւելութեան վրա։ Նրանք դաշնակիցների պէտք չեն զգում և հաւատացած են, որ իրանց միակ գերիշխող տարրը կը լինեն քաղաքի համարեա բոլոր մասերում, բացի մի-երկու տեղից, որ նրա՞նք համարում են դեռ ևս կասկածելի և անորոշ։

Ճիշտ են արդեօք նրանք հաշւել իրանց ուժերը թէ՞ ոչ,—դա ցոյց կը տայ մօտաւոր ապագան։

Բայց այդ կուսակցութեան տրամաբանութիւնը բոլորովին հասկանալի է։

XI

Իսկ եթէ մի կուսակցութիւն այդքան վստահ չէ իր ուժերի վրա և շատ հեռու է անձնապաստան լինելու մոլքից, նա տրամաբանօրէն կանգ կառնէ երկրորդ նկատման վրա, այսինքն նա հարց կը տայ իրան հետևեալ կերպով.

Եթէ ես չեմ կարող աջողութիւն ունենալ, գոնէ թոյլ չը տամ, որ անպայման անհամակրելի թեկնածուն աջողութիւն ունենայ։

Եւ ահա այդպիսի մի հարց դրված է մի քանի կուսակցութիւնների առաջ Թիֆլիսում։

Եթէ անպայման անհամակրելի և վնասակար տարր պէտք է համարենք նրանց, որոնք ուզում են վերադարձնել հին ռէժիմը և ոչնչացնել հոկտեմբերի 17-ը, այն ժամանակ մենք կարող ենք Թիֆլիսի համար որոշ աստիճան հանգիստ լինել։ Աջակողմեանները Թիֆլիսում սակաւաթիւ են և եթէ նրանք կարողանան մի քանի քաղաքներում նոյնիսկ աջողութիւն ունենալ, դա չէ կարող ազդել Պետական Դումայի պատգամաւորի ընտրութեան վրա։ Աջակողմեան պատուիրակները փոքրամասնութեան մէջ կը լինեն և չեն ազդի վերջնական ելքի վրա։

XII

Ուրեմն՝ լուրջ երկիւղ չը կայ աջակողմեաններից։

Իսկ եթէ այդ երկիւղը չը կայ, այն ժամանակ կուսակցութիւնների միութեան հարցը ստանում է ուրիշ նշանակութիւն։ Եւ օրինակ ժողովրդական ազատութեան կամ հայ ռամկավարական կուսակցութեան համար ընտրական հարցը դառնում է այսպէս.

—Մենք ցանկանում ենք ունենալ սեփական թեկնածուներ և պէտք է աշխատենք նրանց համար։ Եթէ կանցնեն՝ շատ լաւ, եթէ չեն անցնի՝ կը լինի ոչ հաճելի, բայց յամենայն դէպս հին ռէժիմի ներկայացուցիչներ չեն լինի։

Եւ դա բոլորովին տրամաբանական է, իսկ կուսակցութեան ապագայ զարգացման համար անպայման մի անհրաժեշտութիւն։

Եթէ լուրջ երկիւղներ և վտանգներ չը կան, ինչու մի կուսակցութիւն իրան չէզոքացնէ, իր ինքնուրոյն դերը հանէ ասպարէզից, երբ նա հիմնված է կենսունակ ուժերի վրա և ապագայ մեծ յաղթանակների հիմնաւոր յոյսեր ունի։

XIII

Եւ արդարև հայ-ռամկավարական և ժողովրդական ազատութեան միացեալ կուսակցութիւնը առանց նոր միութիւնների և դաշների կը գործէ առաջիկայ ընտրութիւնների ժամանակ։

Եթէ կընտրվեն որոշ թւով պատուիրակներ այդ համախմբումից, այն ժամանակ դրանք այնուհետև կարող կը լինեն բանակցութիւնների մէջ մտնել միւս պատուիրակների հետ ոչ թէ գաղափարական կամ քաղաքական մանրամասն համաձայնութիւնների, այլ մի պարզ պայմանախօսութեան համար, այն է՝ ում ընտրել Պետական Դումայի համար պատգամաւոր։

Եւ ուրեմն՝ հայ-դեմօկրատական և ժողովրդական ազատութեան միացեալ կուսակցութեան գործելակերպը պարզ է։

Պատուիրակների ընտրութեան ժամանակ գործել ինքնուրոյն, առաջ մղելով սեփական թեկնածուներին, իսկ յետոյ, երբ ընտրված կը լինեն որոշ թւով պատուիրակներ, համաձայն հանգամանքների, մտածել պայմանախօսութեան մասին ընդհանուր պատգամաւոր թեկնածութեան համար։

Ա. Քալանթար

Ընտրողական պայքարը և կուսակցական համախմբումները յարուցանում են մի շարք հարցեր և շարժում են առանձին հետաքրքրութիւն հասարակութեան մէջ։

Մենք, բռնած լինելով որոշ դիրք, և արտայայտելով մեր ուրոյն կարծիքները պատրաստ ենք լսել և ուրիշ կարծիքներ։

Հասարակութեան գիտակցութեան համար անհրաժեշտ է, որ նա վերջնական հայեցքներ կազմէ, լսելով հիմնաւոր պատճառաբանութիւններ։

«Համախմբումներ» յօդուածների շարքի մէջ մենք պարզեցինք մի քանի հարցեր և կը շարունակենք պարզաբանել։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երէկ մենք ստացանք հետևեալ հեռագիրը.

Էջմիածին, 18 յունվարի, 11 ժ. 17 րոպէ

Մանկավարժական խորհուրդը Մեսրոպ վարդապետի նախագահութեամբ հեռացրեց երկու ուսանողի այն բանի համար, որ նրանք բողոքել էին տիրող կարգերի դէմ և մատնանշել էին ուսուցման թերութիւնները։ Ուսանողների մի մասը չափազանց յուզված է։ Մանրամասնութիւնները նամակով։

Ուսանողների և աշակերտների մի խմբի կողմից՝

Աւդիլբէկեանց

Գանձակ, 16 յունվարի

Այսօր, երեկոյեան ժամը վեց և կէսին երկու անյայտ անձնաւորութիւններ դուրս են հրաւիրում Իւան Փանեանցին ու տեղնուտեղը գնդակահարում։

Նոյն ժամին տեղի ունեցաւ լուսնի խաւարումը, որ տևեց մօտ քառորդ ժամ։ Խաւարման միջոցի. Թուրքերը սկսեցին հրացանաձգութիւն, որի շնորհիւ խեղճ լուսինը ազատվեց եօթ գլխանի օձի բերանից և խաւարումը անցաւ... Չը լինէր այդ հրացանաձգութիւնը, անշուշտ լուսինը գոհ պիտի գնար վիշապին...

Այս գիշեր խուզարկութիւններ կատարվեցին հայոց մասի ծայրի տներում. գրավվեց մի հատ բերդան սիստեմի հրացան։

Սագան

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Թիֆլիս քաղաքի ընտրողների ցուցակում մտցրված են մեռած շատ անձնաւորութիւնների անուններ, ինչպէս և նրանց, որոնք իրաւունք չունեն մասնակցելու ընտրութիւններին։ Այսպէս, ընտրողական թերթիկներ յանձնված է նաև ոստիկանական մի քանի անդամների։

6-րդ թաղամասում 650 ընտրողական թերթիկներ չեն հասցրած ըստ պատկանելոյն։ Ծրարները վերադարձված են քաղաքային վարչութեանը։

Թիֆլիսի «հայրենասիրական ընկերութիւնը» դիմել է քաղաքագլխին, խնդրելով ընկերութեանն ուղարկել 16,000 ընտրողական թերթիկներ, որոնց թւում 1-ին թաղամասի համար—4000, 2-րդի համար՝ 1000, 3-րդի համար՝ 1000, 4-րդի համար՝ 800, 8-րդի համար՝ 1500, 9-րդի համար՝ 3000 և 10 րդի համար՝ 5000։ 5-րդ, 6-րդ և 7-րդ թաղամասերի համար ընկերութիւնը թերթիկներ չէ խնդրում։ Քաղաքային վարչութիւնը որոշել է պարզել. «հայրենասիրական ընկերութիւնը» իրաւունք ունի՞, արդեօք, ստանալ վարչութիւնից ընտրողական թերթիկներ իր անդամներին բաժանելու համար։

Յունվարի 18-ին, ցերեկվայ ժամը 4-ին ելեքտրաքարշի դէպօյում, ատաղձագործների համքարի շինութեան մէջ (Մուշտայիդի ներքևը) Ս. Կորնէևսկու պատասխանատուութեամբ կայանալու է ելեքտրաքարշի ծառայողների նախնական ժողովը՝ պատուիրակութեան համար թեկնածուներ մատնանշելու և Պետական Դումայի ընտրութիւնների հետ կապ ունեցող հարցերը քննելու համար։

Երկաթուղային կառավարիչը մի հրահանգով խորհուրդ է տալիս երկաթուղիներին բերել տալ Ե. Վ. Բօգդանօվիչի «Նոր Դումա» ձրիապէս բաժանվող բրօշիւրը, իբրև հասարակական կրթիչ մի հրատարակութիւն, որպիսին ներկայումս ստացած արդէն երկաթուղիներից մի քանիսը։

«Ղուրբան-բայրամ» տօնի առիթով, Գանձակի, Երևանի, Բագուի նահանգի Բորչալուի գաւառի և Անդրկովկասի այլ տեղերի մահմեդական ազգաբնակութեան լիազօրների ընտրութիւնները չեն կայացել, որով և յետաձգվել են յունվարի 16-ին։

«Իսարի» լրագիրը հաղորդում է, որ առաջին տեղեկութիւնները, որո՞նք ըստացվել են Վրաստանի զանազան կողմերից ընտրութիւնների վերաբերմամբ չեն արդարացնում ռէակցիօնների ենթադրութիւնները և սպասածը։ Այսպէս, Քարթալինիայից (Գորու գաւառ) «Իսարի»ն գրում են, որ ամենուրեք ընտրութիւններին անցել են ձախակողմեանները։ Լրագիր չէ կասկածում, որ այդ օրինակ ելք կը ստացվի և հանուր Վրաստանում, որովհետև Վրաստանում չը կարողացան ստեղծել «աջակողմեանների» խմբակցութիւն։

Չէրնոմորեան նահանգի փոխ-նահանգապետը հեռագրով տեղեկացնել է Փոխարքային, որ ստացված տեղեկութիւնների համաձայն, յունվարի 14-ին կայացել են բանւորների լիազօրների ընտրութիւնները, որով Նովօրոսսիյսկում, Վլադիկավկազի երկաթուղիների վագոններ պատրաստող արհեստանոցներում ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեցող 430 հոգուց եկել են 140-ը, որոնք, ձայների մեծամասնութեամբ, լիազօր են ընտրել Խէրսոնի նահանգի, Նովօգէօրգեվսկ քաղաքացի, ֆինլանդական լէյբ-գվարդիայի գնդի պահեստի ունտեր-օֆիցեր՝ բանւոր Մատվէևին, որը քաղաքական կուսակցութիւններից ոչ մէկին չէ պատկանում։

«Русскій Стандартъ» ընկերութեան նաւթային գործարանում 65 ընտրողներից եկել են 45-ը. ընտրվել է շինական դպրոց աւարտած, անկուսակցական, գիւղացի Գենիէվսկին։

«Цѣпь» ցեմենտի գործարանում 120 բանւորներից ներկայ են եղել 90 հոգի։ Լիազօր ընտրվել է Զէրնիգօվսկի նահանգի կօզակ՝ շինական դպրոցն աւարտած Կօխասը։

Ֆրանս-ռուսական ցեմենտի գործարանում 148 ընտրողներից եկել են 94-ը։ Լիազօր ընտրվել է ցուցակագիր Եփիսկօն, որը նոյնպէս անկուսակցական է։

Սեծովեան ցեմենտի ընկերութեան գործարանում ընտրութիւններին եկել են 158 ընտրող—238 հոգուց։ Լիազօր ընտրվել է ուղղափառ բանւոր Բուկրաբան (սօցիալ-դեմօկրատ)։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

ՎԻԼՆՕ, 17 յունվարի։ Ռուս ընտրողների ժողովը ձայների ճնշող մեծամասնութեամբ մերժեց նախընտրական համաձայնութիւն կապել հրէաների հետ։

ՎԻՆՆԻՑԱ, 16 յունվարի։ Խոշոր հողատէրերի նախընտրական ժողովում լեհ կալուածատէրերը բլոկ կազմեցին ռուսների հետ։

ՏԱԳԱՆՐՕԳ, 16 յունվարի։ Ընտրողների ժողովում սօցիալ-դեմօկրատները պարտութիւն կրեցին։ Ընտրողական մասնաժողովի կազմի մէջ մտան մեծմասամբ հոկտեմբերականներ, անկուսակցական աջակողմեաններ և մի քանի սահմանադիր-ռամկավարներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվարի։ Շրջանային ժողովների լիազօրների ընտրութիւնները։ Կալուգայի նահանգում ընտրութիւնները վերջացել է ամբողջ նահանգում. ընդամենը ընտրվել են 397 հոգի, որոնց թւում 186 ը միապետականներ են, 184-ը՝ չափաւորականներ. Կալուգայի նահանգում եկել են բոլոր ընտրողները. ընտրութիւնները կատարվել են լիակատար կարգ ու կանոնով։ Շատ շրջաններում ընտրութիւններից առաջ մաղթանքներ են կատարվել։

Բեսարաբիայի նահանգում, Սարօկայի գաւառի 12 շրջաններում ընտրվել են 24 հոգի, որից 1-ը միապետական, 23-ը չափաւորականներ են։

Աստրախանի նահանգում՝ առայժմ ընտրվել են 42 հոգի, որից 2-ը միապետականներ են, 20 ը չափաւորականներ։ Աստրախանի կօզակների նախկին պատգամաւորը չէ քուէարկվել։

Մանր հողատէրերի լիազօրների ընտրութիւնները. Վիլէնսկի նահանգում 4 գաւառների նախնական համագումարներին ընտրվել են 45 չափաւորականներ։

Վիլէնսկի գաւառում ընտրվել է Պետական Դումայի նախկին անդամ Բարօն Ռօօպ եպիսկոպոսը։

Խօդեմսկի գաւառում ընտրվել են չափաւորական հրէաներ։ Համագումարին ներկայ են եղել 200 հրէաներ և 50 քահանաներ։ Վերջինները ցոյցով հեռացել են ժողովից, անարդար համարելով, որ դրանց 30 ցենզը կուլ է գնում հրէաների 5 ցէնզին, որովհետև նախագահը մերժել էր քահանաների համար առանձին քուէարկութիւն կատարել։

Մոսկվայի նահանգում, 4 գաւառներում, ընտրվել են 74 հոգի, որոնցից 46-ը չափաւորականներ են և 23-ը միապետականներ։

ՄԱՄՈՒԼ

Յունվարի 9-ի առիթով, համաձայնաբար ուրիշ հրատարակութիւնների հետ, սև-հարիւրեակային «Колоколъ»-ը մի յիշողութիւնների ամբողջ ֆէլիետօն է նուիրել Գապոնին։ Յիշողութիւնների հեղինակը, որ տեսել էր յունվարի հերոսին արիւնոտ օրվայ նախօրեակում, պատահել ու խօսակցութիւն է ունեցել Գապոնի հետ արտասահմանից վերադառնալուց յետոյ։ Գապոնը այդ խօսակցութեան ժամանակ մի շարք խոստովանութիւններ է արել իր դիտաւորութիւնների ու ծրագիրների մասին, որոնք բաւականին հետաքրքրական լինելով, առաջ ենք բերում.

Դուք կարծում էք, որ իմ քաղաքական գործունէութիւնը վերջացել է արդէն։ Ո՛չ, ոչ. ես դեռ կարող եմ դուրս լողալ, յարել աջ կամ ձախ ափին և ամուր տեղ ստեղծել ինձ համար։ Ես ծրագրել էի առաջ շարժվել Վոլգայի ափերով և ոտքի կանգնեցնել տեղական հնադանդաւորներին, խոստանալով նրանց բոլոր իրաւունքները, և այդպիսով յեղափոխական շարժման գլխաւոր գործօնը դարձնել։ Ես կարծում եմ, որ Ստենկա Ռազինի և Պուգաչևի պատմութեան կրկնութիւնը այժմ էլ հնարաւոր է։ Ես այդ մասին շատ ընդարձակ ծրագիրներ ունեմ, բայց բանւորական կազմակերպութիւնների խնդիրը մինչև այժմ էլ իմ ոտները կապկպել են և չեմ կարողանում ազատվել նրանցից։ Ահա մօտ ժամանակներս բանւորներից մէկը անձնասպանութիւն գործեց. այդ էլ մի նոր պատմութիւն է։ Մի այնպիսի ժամանակ, ինչպիսին մերն է, անյայտ մարդկանց պէտք է վեր բարձրացնէ, և շատ տարօրինակ կը լինէր օգուտ չը քաղել դրանից։ Գալով հաւատի մասին տուած ձեր հարցին, ես պէտք է նկատեմ ձեզ, որ իմ հաւատը վաղուց է հանգել, և եթէ ես դեռ մի որևէ բանի հաւատում եմ, այդ միայն իմ անձն է։

*

Լրագրական տեղեկութիւններից արդէն յայտնի է, որ Պետերբուրգում ձախակողմեան կուսակցութիւնների մէջ համաձայնութիւն կայացնելու խնդիրը անաջողութեան է հանդիպել։ Անաջողութեան գլխաւոր պատճառը իբր թէ եղել է այն, որ ծայրայեղ ձախակողմեանները կադետներից պահանջել են, որպէս զի Պետերբուրգի 6 պատգամաւորական տեղերից երեքը իրանց տրվի, և կադետները մերժել են կատարել։ Այդ պատճառով «Вѣкъ» լրագիրը դատափետում է ժողովրդական ազատութեան կուսակցութեանը, նրա այդ վարմունքը համարելով կուսակցութեան եսականութիւն։

Ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը հզօր է և կենսունակ միայն ժողովրդական մասսաների համակրութեամբ։ Այդ երևում է հէնց նրանից, որ նա ինքն էլ եռանդով հերքում է իր դէմ ուղղված այն մեղադրանքը, որ ինքը բուրժուական կուսակցութիւն է։ Բայց խզելով իր յարաբերութիւնները սօցիալիստական կուսակցութիւնների և աշխատաւոր դաշնակցութիւնների հետ, որոնց սահմաններումն են կենտրոնացած երկրի գիտակից պրոլետարիատը և աշխատաւոր տարրերը, նա դրանով թուլացրած չի լինի, արդեօք, իր արմատները ժողովրդի մէջ։ Նա համոզիչ ապացոյց չի տալ դրանով, որ անջատվում է աշխատաւոր մասսաներից։

Թող ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը չը մտածէ, որ իր և աշխատաւոր կուսակցութիւնների ու կազմակերպութիւնների մէջ բացված ճեղքուածքը կարելի է ծածկել «Դումայի մէջ օրգանական աշխատանքներ կատարելով»։ Ընդհակառակը այդ ճեղքուածքը աւելի ևս կաւելանայ, որովհետև ամեն մի դրութիւն իր լօգիկան ունի։ Առանձնացած գործունէութեան գծի վրա կանգնելով՝ կուսակցութիւնը կարող է իր ձախակողմեան հարևաններից հեռանալ, այլ ոչ թէ մօտենալ նրանց։

Մանաւանդ որ աշխատաւոր Պետերբուրգը կամ աշխատաւոր Մոսկվան երբէք չեն կարող ներել մի այնպիսի յաղթութիւն, որ ձեռք է բերված ընտրողական անկատար օրէնքներով և սենատի մեկնութիւններով ստեղծված պայմաններում։

Շատ տարօրինակ է, որ «Вѣкъ»-ը սենատի մեկնութիւնների ու ընտրողական անկատար օրէնքների շնորհիւ ստեղծված պայմանների մասին է խօսում։ Բայց մի՞թէ այդ պայմանները միևնոյն չեն բոլոր ձախակողմեանների համար. ինչու յաղթութիւնը ներելի է մէկի համար, իսկ միւսի համար՝ ոչ։

*

«Հոսանք» լրագիրը հաղորդելով, որ Դաշնակցութիւնը արդէն բլոկ է կազմել միւս մանր-բուրժուական կուսակցութիւնների հետ, ինչպէս սոց.-յեղափոխականների և սոց.-ֆէդերալիստների հետ, նախատեսնում է, որ այդ բլոկը ուղղված է սոց.-դեմօկրատիայի դէմ, որ դա մի կռիւ է ուղղված կովկասեան պրօլետարիատի դէմ: Այդ կռիւը, որ սկսված էր վաղուց, աւելի խիստ արտայայտութիւն է ստանում ներկայ ընտրական պայքարի միջոցին և բնորոշվում է «Նեռւեւս լօզունգով. կռիւ, կատաղի, սուր կռիւ նացիօնալիզմի դէմ»...

Լրագրի կարծիքով, Ռուսաստանի և Կովկասի պայքարները տարբեր են իրարից. Ռուսաստանում ձախակողմեանները կռւում են հին րէժիմի «ներկայացուցիչ սև-հարիւրականների դէմ», մինչդեռ

Կովկասում պրօլետարիատն ու նրա կուսակցութիւն սոց.-դէմօկրատիան ստիպված են խիստ և յամառ կռիւ մղել հասարակութեան մի քանի խաւերի և նրան ներկայացնող քաղաքական կուսակցութիւնների ազգայնական տենդենցների ու նախապաշարմունքների դէմ:

Նացիօնալիզմը, որպէս բուրժուական դասակարգերի իդէօլօգիան, որքան էլ որ նրան գեղեցիկ կերպով զօզարկեն, որքան էլ որ նրան փառաբանեն, մինչև իսկ սուրբ հռչակեն —հանդիսանում է սօցիալիզմի երդուեալ թշնամին և նրա իրականացման գործի խոչընդոտը:

Եւ դա աւելին: Հ. Յ. Դաշնակցութիւնը, և նման կուսակցութիւնները, որոնք սօցիալիզմի փետուրներով են զարդարւում, բայց իրականութեան մէջ խիստ ազգայնական են, ներկայանում են որպէս դիմակաւորւած բուրժուական կուսակցութիւններ:

Եւ որովհետև այդ կուսակցութիւնները մտնելով պրօլետարիատի, բանւոր դասակարգի մէջ՝ անբարոյականացնող ներգործութիւն են ունենում, մթնացնում են նրա դասակարգային ըմբռնողութիւնը, այդ պատճառով էլ միացնում սօցիալ-դեմօկրատիան խիստ կռիւ է մղում նրանց դէմ և աշխատում է մերկացնել նրանց կեղծ սօցիալիստութիւնը: Մեր առաջ ներկայ ընտրութիւնների ժամանակ տեղի ունեցող այդ երկու կուսակցութիւնների՝ Դաշնակցութեան և սօցիալ-դեմօկրատիայի կռիւը «Հոսանքը» աշխատում է լուսաբանել նացիօնալիստական և սօցիալիստական հակադիր աշխարհայեացքներով ու տենդենցներով: Այդ հանգամանքը նրան դրդում է դնել հայ պրօլետարիատի առաջ հետևեալ հարցը և սպասել նրա պատասխանին.

Արդեօք պէտք է կանգնել սոց.-դեմօկրատիայի դրօշակի տակ, միւս ազգութիւնների պրօլետարիատի հետ միասին, թէ պէտք է դուրս գալ նրա դէմ՝ ազգայնական - բուրժուական Դաշնակցութեան շարքերում:

Հայ բանւորը պէտք է գիտենայ, որ Դաշնակցութեան ձայն տալով, նա իր սեփական ձեռքով կուժեղացնէ իր դասակարգային թշնամիների շարքերը և կը հեռացնէ իր դասակարգի քաղաքական ու տնտեսական ազատութիւնից ազատւելու մոմէնտը:

Այդ գիտակցելով, ամբողջ հայ պրօլետարիատը, յանուն իր դասակարգային շահերի, թող հանդէս գայ մարտնչելու բուրժուական-նացիօնալիզմի դէմ:

ԲԺ. Ն. ԽՈՒԴԱԴԵԱՆ

Բժիշկ Ն. Խուդադեան, որի մահվան մասին մենք հաղորդեցինք, Թիֆլիսի աչքի ընկնող գործիչներից մէկն էր:

Նրա գործունէութիւնը գլխաւորապէս կենտրոնացած էր քաղաքային ինքնավարութեան և երկաթուղիական հիւանդանոցի շուրջը:

Լինելով երկար տարիներ ձայնաւոր Թիֆլիսի դումայում և բժիշկ երկաթուղիական հիւանդանոցում, նա պաշտպան էր հանդիսանում քաղաքի բանւոր և չքաւոր դասի շահերի: Քաղաքային ինքնավարութեան նիստերում նա միշտ յիշեցնում էր ձայնաւորներին և ուպրավային Նախալօվկայի և քաղաքի հեռաւոր մասերի բարեկարգութեան կարիքների մասին:

Նա մեծ ծառայութիւններ է մատուցել նոյնպէս ժողովրդական խնամակալութիւններ կազմակերպելու գործում:

Մասնաւորապէս նա շատ հոգատարութեամբ է պաշտպանել քաղաքում ծառաստաններ աւելացնելու խնդիրը և մեծ ջանքեր է գործ դրել քաղաքին կից անտառ աճեցնելու:

Իր համոզմունքներով նա արմատական-ազատամիտ էր:

ԵՐԿՈՒՍԻՑ ՈՐԻ՞Ն

I

Ընտրողական պայքարը սկսված է:

Կովկասի մայրաքաղաքը պիտի ցոյց տայ իր քաղաքական փիզիօնոմիայի տիպիկ գծերը ներկայ մոմենտում:

Մեր իրականութեան առանձնայատուկ պայմաններում առաւել ևս անհրաժեշտ է, որ ամեն մի քաղաքացի իր պարտականութիւնը կատարելիս լաւ կշռի այն մօրալ հետևանքները, որ կունենայ այս կամ այն կուսակցութեան աջողութիւնը ընտրութիւնների ժամանակ:

Ոչ մի մաքուր, գաղափարական կուսակցութիւն չի վախենայ ամենախիստ քննադատութիւնից: Թող նոյնիսկ աչառու լինի այդ քննադատութիւնը. մաքուր-գաղափարական կուսակցութեան համար վնասաբեր չի լինի մեր կայնել այդ աչառութիւնը: Այլ բան է եզուիտական-թայֆայական բնոյթ կրող «կուսակցութիւնների» դէմքը. դրանք վախենում են քննադատութիւնից և յարձակումից, որովհետև ամեն մի մերկացում երևան է հանում գարշելի զանգուածքի խնամքով սքօղված ամբողջ այլանդակութիւնը:

Քաղաքական կեանքում կուսակցութիւն անունը, թիւրիմացութիւնների առաջն առնելու համար, պէտք է գործածվէր միմիայն պարզված ծրագիր և շիտակ գործելակերպ ընդունող համախմբումների նկատմամբ: Դժբախտաբար իրականութեան մէջ այդպէս չէ, և որքան անկուլտուրական է և քաղաքականապէս տհաս մի ժողովուրդ, այնքան շատ են մեղանչում այդ կուսակցութիւն բառի ուղիղ գործածութեան դէմ: Մեզանում ամեն մի խմբակցութիւն իրան կուսակցութիւն է անուանում: Շնորհիւ դրան տեսնում էք, որ մի ընկերակցութիւն իր՝ «նպատակը արդարացնում է միջոցները» ճիզուիտական լօզունգով, կամ մասնաւոր անհատներից ահաբեկումով փող կորզելու իր անբարոյական սկզբունքով, կամ հակառակորդներին անկիրթ խաւից գնդակահարելու տմարդի սովորութեամբ հանդերձ անամօթաբար կուսակցութիւն են յորջորջվում:

Թէև nomina sunt odiosa, բայց և այնպէս միտքը լաւ է պարզվում օրինակներով... Վերցնենք, օրինակի համար, ռուսաց աջակողմեան «յեղափոխական» կուսակցութիւններից «ռուս ժողովրդի դաշնակցութիւնը» («союзъ русскаго народа»): Եթէ այդ «կուսակցութեան» մասին դատելու լինէք միայն նրա չէֆերի դեմագոգիական ճառերից կամ նրա պաշտօնական «օրգաններից», դուք այնքան լսէք և կարդաք «հայրենիք», «ազգասիրութիւն», «ազգային ինքնուրոյնութիւն», «ռուս ժողովրդի բարօրութիւն» և այլն և այլն կատանչներ ու պերճախօսութեան ծաղիկներ, որ եթէ միամիտ էք, մի րօպէ կը մտածէք թէ իսկական մի կուսակցութիւն է ձեր առջև կանգնած: Բայց ֆրազները մի կողմ շպրտեք և ծանօթացէք այդ կուսակցութեան ներքին գործերի հետ, նրա գործ դրած միջոցների հետ, նրա էութեան հետ և դուք կը տեսնէք, որ «ռուս ժողովրդի դաշնակցութիւնը» բոլոր երկրների և ժողովուրդների «պատրիօտական» ընկերակցութիւնների կաթէգօրիային պատկանող մի խուլիգանական կազմակերպութիւն է:

Ուրեմն, ֆրազներով դեռ ոչինչ չի ապացուցվում. պէտք է վերցնել էութիւնը, գործունէութիւնը:

Ամենամեծ ոճրագործն էլ, Տարտիւֆն էլ, եթէ ինքը լինի իր դատաւորը, իրան անմեղ ազատ դուրս կը բերի և սպիտակ, ինչպէս Մասիսի գլխի ձիւնը. բայց երբ դատաւորը լինում է ուրիշը, երբ քննադատական բովից է անցնում, լինի նա մի անհատ թէ կուսակցութիւն, այն ժամանակ պարզվում է դրանց իսկական փիզիօնոմիան:

Իրանց քաղաքական հակառակորդներին անկիրթ խաւից գնդակահար անող «ռուս ժողովրդի դաշնակցութեան» չէֆերը, եթէ իրանց խօսքերին նայելու լինէք, անմեղ են «դաւաճան» և «հայրենիքի թշնամիների» դէմ «ռուս ժողովրդի արդար զայրոյթի արտայայտութեան» մէջ: Սպանեցին Հերցենշտէյնին: Անշուշտ իսկական յանցաւորը այն վարձկան ոճրագործներն, կոյր գործիքները չէին, որոնք կատարեցին հրամանը, այլ թելադրողները, ներշնչողները, որոնք սիրում են ուրիշների ձեռներով շագանակներ հանել կրակից: Ի պատիւ ռուս ինտելիգենցիայի պէտք է ասել, որ նա ունեցաւ բարոյական անվեհերութիւն իր սեփական նախաձեռնութեամբ բացել և գտնել Հերցենշտէյնի սպանութեան իսկական հեղինակներին, ոճրի հետքերը հասցնել մինչև «ռուս ժողովրդի դաշնակցութեան» չէֆերի առանձնասենեակները... Այդպէս է գործում ռուս հոյակապ ինտելիգենցիան: Փառք և պատիւ նրան և օրինակ ու խրատ... Ասքանազեան խորովակների համար... Առանց այդ անվեհեր քննադատութեան, զանազան մութ և խուլիգանական ընկերակցութիւններ իրանց վերապահում են մի առանձնաշնորհում, որից զուրկ է անգամ ռուս բիւրօկրատիան: Դուրս է գալիս, որ կարելի է քննադատել, մերկացնել ամեն չարագործութիւն և ղեծում կատարված ամենահզօր ռուս բիւրօկրատիայի մէջ, բայց «դաւաճանութիւն է», երբ երևան էք հանում աւելի վատթար չարագործութիւններ, գործած այս կամ այն «կուսակցութեան» կողմից: Դա աբսուրդ է, իսկ ես նրանցից չեմ, որոնք ասում են. credo quia absurdum! Երբեք ոչ ազատութիւնը, ոչ էլ ժողովուրդը կարիք չունեն այնպիսի գործիչների, որոնց արարքները քրէական ոճիրներ են «ազգասիրական» դիմակի տակ: Հեռու այդ անբարոյականացնող դիմակը:

Անշուշտ, երբ հասարակութիւնը ահաբեկված է զանազան եզուիտական—պատրիօտական ընկերակցութիւնների կողմից և ֆիզիքական ճնշման տակ հնարաւորութիւն չունի անվերկիւղ կարծիք յայտնել, քննադատել, հրապարակ հանել չարագործներին և չարամիտներին, ինչ խօսք կարող է լինել «ժողովրդի ազատ կամքի» արտայայտութեան մասին: Բացի այդ ֆիզիքական ճնշումից, միջոցների «անխտրականութեան» ասպետների արսենալում կան և բարոյական ճնշումների զանազան զէնքեր. կարիերիստ մարդկանց համար մի շարք «փափուկ հանգամանքներ», իսկ անգիտակից ամբոխի համար հին-հին լարից հիւսած ցեղական-կրօնական նախապաշարմունքներ, նացիօնալիստական կրքեր, որոնց վրա այնքան վիրտուօզ խաղեր են խաղում զանազան տիպի պրօվօկատօրներ և խուժանապետներ: Յիշէք, օրինակի համար, Թիֆլիսում տարիներ շարունակ քաղաքային դումայի ընտրութիւնների ժամանակ բորբոքվող հայ-վրացական անտագօնիզմի հարցը, որ առաջ էին նետում շահաւէտ պաշտօններ և հասարակական կուտակից կրծելու մեծ ախորժակներ ունեցող զանազան «ինտելիգենտներ»: Ազգասիրութիւնից էր յանկարծ խօսում մի հայ, որ իր ամբողջ կեանքում միմիայն այդ րօպէին ձեռնտու էր համարում հայ կոչվելու: Ազգասիրութեան դիմակի տակ հացի խնդիր...

Այս բոլոր ներածութեան նպատակն էր պարզելու համար, որ նախքան ժողովուրդը դէպի քուէատուփերը առաջնորդելու, պէտք է նրան սթափեցնել, փարատել այն մշուշը և կեղծիքը, որ ստեղծվել է նրա շուրջը, ազատել նրա կամքը որոշ տիպի գործիչների կաշկանդող հիպնոսից: Հրապարակական անաչառ և ամենախիստ քննադատութիւն մրցող կուսակցութիւնների — ահա նախընտրական պայքարի առաջին պահանջը:

Անկախ

(Կը շարունակվի)

ԺԱՀՐՈՏ ԼՕԳԻԿԱ

Ամեն մի անաչառ ու ազնիւ մարդ չէ կարող զզուանք չը տածել դէպի ընտրական այն տգեղ բարքերն ու ֆալսիֆիկացիաները, որ այսօր անհերքելի փաստ է Թիֆլիսում: Ոչ մի բարի նպատակ չէ կարող արդարացուցիչ դարձնել նրանց և ոչ մի կուսակցութիւն կամ անհատ միայն զերծ արհամարհանքից և նշաւակութիւնից. լինի նա ձախակողմեան թէ աջակողմեան՝ դա միևնոյնն է, փաստերը մնում են փաստեր:

«Մշակի» № 10-ում, ես, իբրև ընտրող և իբրև քաղաքացի, պարտք համարեցի երևան հանել մի հանգամանք, որին անձամբ ականատես եմ եղել, ապացուցանելու, որ ընտրական գործում սարսափելի քաօս է տիրում, որ ընտրութեան գործը դրված է աննորմալ պայմանների մէջ, և նախազգուշացնել քաղաքացիներին: Բանից դուրս է գալիս, որ «Ժամանակի» ժահրոտ լօգիկայի համաձայն դա մատնութիւն է: Մենք իրաւունք չունենք սեւը սև ասելու և սպիտակը սպիտակ...

Սակայն նրանք, որոնց համար ամենից աւելի թանգ է արդարութիւնը, իրաւունք չունեն տեսնելով հանդերձ՝ «չը տեսնող ձևանալ»:

Եթէ մատնութիւն է այն, որ երևան են հանվում ընտրողների իրաւունքն ու կամքը բռնաբարութեան ենթարկող փաստերը, որ ստորութիւնն ու կեղծիքը կնքվում են իրանց իսկական անուններով, պրօֆեսսիօնալ գողութիւնը՝ գողութիւն, ապա ինչ անուն կարելի է տալ նրանց, որոնք դրանց հեղինակներն են, հովանաւորողները կամ խրախուսողները:

Ի՞նչ կապ կարող է լինել երկու հակառակ ձգտումների մէջ, ժողովրդի իրաւունքների պաշտպանութեան և բռնաբարութեան ու չարագործութեան մէջ: Մինչդեռ փաստերը վկայում են, որ դուք կանգնած էք այդ վտանգաւոր հողի վրա. «աջով գրում էք, ձախով ջնջում»:

Դուք ձեր մասին երևան եկած փաստերը համարում էք ինսինուացիաներ. բայց ասացէք խնդրեմ, ում դարդն է կտրվել նախ քան ծրարները բաժանելը Դաշնակցութեան լիազօրների անունները գրել ու ապա բաժանել: Փաստերի առաջ դուք կարմրելու անգամ ընդունակութիւնը չունէք:

Ձեզ հետ երբ խօսում են ակնարկներով, դուք դրանց համարում էք ինսինուացիաներ, իսկ երբ խօսում են փաստերով, ասում էք մատնութիւն է, Բայց միթէ ձեր այդ ժահրոտ կարծիքը արդարութեան նշոյլ անգամ պարունակում է իր մէջ:

Դուք առաջ էք բերում իմ անձնական դիտողութիւնը, որտեղ ասված է.

Յունվարի 15 ին և 16-ին IV քաղաքամասում, Վօզնեսենսկի փողոցի վրա № 23 տան մէջ, մի ինչ որ պարոնի բնակարանի դահլիճը կանցելարիա էր ներկայացնում. սեղանի վրա թափթփված էին ընտրողական ծրարները, և գօրօդօվօյները, երևի, տանտիրոջ (դաշնակցական) հրամանով էլ դասաւորում ու բաժանում էին նրանց ընտրողներին:

Բայց դուք պարտաւոր էիք առաջ բերել և դրա շարունակութիւնը, որը ընտրական ամբողջ սիստեմը բնորոշելուց բացի պարզում է և մի ուրիշ տենդենց, որի ստեղծողը ես չեմ, այլ փաստը: Ես առաջ կը բերեմ միայն այդ կտորը, թողնելով եզրակացութիւնները ընթերցողին.

Միանգամայն հանելուկ է մնում այդ հանգամանքը. ինչ կապ ունեն ընտրողական ծրարները յիշեալ պարոնի հետ և ինչու են գտնվում նրանք մի մասնաւոր մարդու բնակարանում: Որքան մեզ յայտնի է, ծրարները յանձնված են ոստիկանութեանը և վերջինս էլ միայն պէտք է յանձնէ ընտրողներին:

Ես տալիս եմ միայն սոսկ իրողութիւնը. և մեղապարտի սեղանի վրա նստողը ոչ թէ Դաշնակցութիւնն է, իբրև կուսակցութիւն, այլ ընտրական տենդով կուրացած և գաղափարականութիւնը թաղող նրա տեղական վարիչները և, որ գլխաւորն է, նա՝ ով հնարաւորութիւն է տալիս այդպիսի պայմաններ ստեղծվելուն:

Խելագար պէտք է լինել այդպիսի տարրական ու աչքառու հասկացողութիւնները իրար հետ շփոթելու համար:

Ձեր լօգիկական այդ նոր սիստեմը միայն խղճահարութեան է արժանի:

Լ. Դանիէլեան

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Լեւ Տօլստօյի նոր կոչը

Այսօր լրագիրները հրատարակեցին կոմս Լև Տօլստօյի նոր կոչը և Պետրով քահանայի աքսորման գործի մանրամասնութիւնները:

Ռուս հռչակաւոր փիլիսոփան ֆրանսիական «Revue Bleue» հանդէսի մէջ մի նոր կոչ է հրատարակել առ ռուս կառավարութիւնը, ռուս ժողովուրդը և ռուս յեղափոխականները:

Ռուս կառավարութեանը նա խորհուրդ է տալիս «մի կալ հակառակ չարին» սկզբունքը:

Ռուս ժողովրդին (ժողովուրդ ասելով Տօլստօյը հասկանում է առհասարակ բոլոր ռուսներին և մասնաւորապէս ռուս գիւղացիներին, որոնք իրանց աշխատանքով պահպանում են միւս դասակարգերի գոյութիւնը) նա ասում է.

«Դուք, աշխատաւոր ռուս մարդիկ, մանաւանդ ռուս գիւղացիներ, գտնվում էք այժմ առանձին ծանր կացութեան մէջ: Որքան էլ ծանր էր ձեզ համար ապրել հողի նեղ շերտերի վրա ծանր հարկերով և կառավարութեան սկսած պատերազմներով, բայց մինչև վերջին ժամանակը դուք հաւատում էիք Ցարին, համոզված էիք, որ կեանքը անկարելի է առանց ցարական իշխանութեան, դուք անմռունչ հպատակվում էիք կառավարութեան: Որքան էլ ծանր էին ցարական իշխանութեան կարգադրութիւնները, դուք անմռունչ հնազանդվում էիք կառավարութեան, որովհետև նրանից բացի ուրիշ կառավարութիւն չը կար: Բայց ահա այժմ ժողովրդի մի մասը ըմբոստացել է, դադարել է հպատակելու կառավարութեան և նրան կռիւ է յայտարարել: Շատ տեղերում հաստատվել է երկու կառավարութիւն և ամեն մինը պահանջում է հպատակել իրան: Ուրեմն դուք էլ առաջվայ պէս հպատակվել չէք կարող. դուք պէտք է քննէք և տեսնէք որտեղ է բարին, որտեղ է չարը... Ի՞նչ պէտք է անել: Ի՞նչ պէտք է անեն ոչ թէ այն հազարաւոր բանւորները, որոնք վխտում են մեծ քաղաքներում, այլ հարիւր միլիօնաւոր մեծ գիւղական ժողովուրդը: Հին կառավարութիւնը ասում է. «Մի լսէք խռովարարներին, նրանք ձեզ շատ բան են խոստանում, բայց նրանք ձեզ կը խաբեն: Մնացէք հաւատարիմ ինձ, ես գոհացումն կը տամ ձեր կարիքներին»: Խռովարարները, իրանց կողմից, ասում են. «Մի հաւատաք կառավարութեան. նա միշտ ձեզ հարստահարել է: Միացէք, օգնեցէք մեզ, մենք այնպիսի կառավարութիւն կը ստեղծենք, ինչպէս ամենաազատ երկիրներում: Դուք ինքներդ կընտրէք ձեր կառավարողներին, ինքներդ կը շտկէք ձեր գործերը, ինքներդ կօգնէք ձեր ցաւերին»: Արդ, ինչպէս ընտրութիւն անեն գիւղացիները այս երկու կուսակցութիւնների մէջ»:

Թէ ինչպէս է լուծում այս հարցը Տօլստօյը, դժբախտաբար, այն լրագիրը, որից մենք քաղում ենք նրա կոչի թարգմանութիւնը (Нов. Вр.), առաջ չէ բերում իրա Տօլստօյի խօսքերով, այլ իր կողմից յայտնում է, թէ ծանօթ լինելով Տօլստօյի վարդապետութեան հետ, կարելի է ըմբռնել թէ ինչ է նա պատասխանում. այն է, որ պետութեան բոլոր կարիքները ինքը ժողովուրդը կարող է գոհացնել առանց կառավարութեան միջամտութեան, առանց տուրք և հարկ վճարելու, զինուոր տալու և այլն: Բայց այստեղ մի ուրիշ հարց է ծագում. արդեօք Ռուսաստանը չի քայքայվի, բաժան բաժան չի լինի, եթէ գիւղացիները հետևեն Տօլստօյի խորհրդին՝ հարկ չը վճարելու: Այդ հարցին փիլիսոփան այսպէս է պատասխանում:

«Իմ կարծիքով ազգերի այն մեծ համախմբումը, որ կոչվում է Ռուսաստան, ոչ միայն հարկաւոր չէ գիւղացիների և բանւորների համար, այլև ուղղակի վնասում է նրա շահերին և նրա թշուառութիւնների գլխաւոր աղբիւրն է հանդիսանում: Եթէ ձեզ ճնշում են հարկերով, եթէ ձեզ ստիպում են վճարել ահագին փոխառութիւնների համար, եթէ ձեր զաւակներին խլում են և ուղարկում պատերազմելու մարդկանց դէմ, որոնց հետ դուք ոչ մի գործ չունէք, այդ ամենը ծագում է նրանից, որ կամենում են պահպանել մի իշխանութեան ներքոյ և Լեհաստանը, և Կովկասը, և Ֆինլանդիան, և Թուրքեստանը, և Մանջուրիան, և ուրիշ ազգեր: Այն Ռուսաստանը, որ դուք պահպանում էք ձեր հպատակութեամբ կառավարական իշխանութեան, ոչ միայն մի մեծ չարիք է, այլ և մեծ մեղք: Որովհետև այդ Ռուսաստանի պահպանութեան համար դուք ստիպված էք պահանջել, որ կովկասցիները, լիտօվցիները, հայերը, թուրքերը ապրեն ոչ այնպէս, ինչպէս իրանք են կամենում, այլ ինչպէս նրանց հրամայում է կառավարութիւնը»:

Յեղափոխականներին ուղղված կոչի մէջ Տօլստօյը անպայման դատապարտում է նրանց գործունէութիւնը, յեղափոխական անուանելով ոչ միայն իսկական յեղափոխականներին, տերրօրիստներին, այլ և նոյն իսկ խաղաղ սահմանադրականներին:

«Դուք, յեղափոխականներ ամեն գոյնի և ամեն կոչման, գտնում էք, որ այժմեան կառավարութիւնը վնասակար է. ժողովների, յօդուածների, ճառերի, ցոյցերի, սպանութիւնների, տանջանքների և զինված ապստամբութիւնների միջոցով աշխատում էք փոխարինել գոյութիւն ունեցող իշխանութիւնները ուրիշ իշխանութիւններով: Չը նայելով որ դուք համաձայն չէք իրար մէջ թէ նոր կառավարութիւնը ինչ տեսակ պէտք է լինի, բայց դուք կանգ չէք առնում ոչ մի ոճրի առաջ—սպանութիւնների, պայթումների և ներքին կռւի առաջ»:

«Դուք, յեղափոխականներ — դոկտորներ, պրօֆէսօրներ, ուսանողներ, ժուռնալիստներ, կուրսիստուհիներ, երկաթուղային բանւորներ, փաստաբաններ և վաճառականներ—դուք մինչև այսօր ձեր գործով էիք զբաղված, երբեք ոչ մի ընդհանուր բան չունէիք կառավարութեան հետ. և ահա դուք, որոնց ոչ ոք չէ կոչել, յանկարծ ձեզ վրա էք վերցնում պատասխանատուութիւնը ամենազարհուրելի արարքների միայն նրա համար, որ յոյս ունէք հաստատել Ռուսաստանում հասարակական նոր կարգ, և այդ նոր կարգն էլ ամեն մինը ձեզանից իր կերպով է հասկանում: Դուք ռումբեր էք նետում, դուք կողոպտում էք, դուք սպանում էք, դուք գլխատում էք. հազարաւոր մարդիկ սպանված են, գազանական դրութեան հասցրված: Եւ այդ ամենը ինչի՞ համար. միայն նրա համար, որ մի քանի հոգի, ժողովրդի հազիւ մի տասներորդ միլիօնական մասը, կարողանան ապացուցանել, թէ նրանք իրաւունք ունէին, երբ պահանջում էին գումարել այնպիսի Դումա, որ նորերս գումարված էր: Մի մոռացէք, որ ուրիշները պահանջում են Դումա, գումարված ընդհանուր և գաղտնի քուէարկութեան հիման վրա. ոմանք պահանջում են հանրապետութիւն, ոմանք ոչ թէ հասարակ հանրապետութիւն, այլ սօցիալական: Եւ յանուն այդ բոլորի, դուք ներքին կռիւ էք սկսում: Դուք ասում էք, որ աշխատում էք ժողովրդի համար, որ ձեր գլխաւոր նպատակը—ժողովրդի կարիքն է: Բայց հարիւր միլիօնաւոր ժողովուրդը ձեզանից այն չէ խնդրում, ինչ որ դուք ջանք էք անում ձեռք բերել այնքան վատ միջոցներով: Դուք պէտք չէք ժողովրդին. նա միշտ նայել է ձեզ վրա—այլապէս նա չէ էլ կարող նայել—իբրև մակաբոյծների վրա, որոնք ամեն տեսակ միջոցներով խլում են նրանից իր աշխատանքի պտուղները: Հասկացէք, որ դուք ամենքդ, որ ժողովրդի բարեփոխման համար էք աշխատում, միայն վնասակար մակաբոյծներ էք, որ ծծում էք ռուս ժողովրդից նրա վերջին հիւթը. դուք փռւում էք նրա մարմնի վրա և ձեր թարախով վարակում նրա արիւնը»:

Ի վերջոյ Տօլստօյը դատապարտում է և հասարակական գործունէութիւնը, ասելով, որ հասարակական կեանքը և մանաւանդ սօցիալական կռիւը հեռացնում է մարդկանց հոգու ներքին կեանքից և փչացնում է մարդկանց, ստորացնելով հասարակական բարոյականութեան մակերևոյթը:

«Արդ, ես կարծում եմ—ասում է նա — որ մասնակցութիւնը հասարակական գործունէութեան և հասարակական պայքարի մէջ ոչ միայն վեհ և լաւ գործ չէ, ինչպէս մտածում են, այլ անպայման յիմար, վնասակար և անբարոյական զբաղմունք է»:

Իբրև վահան բոլոր չարիքների դէմ Տօլստօյը պահանջում է միայն ինքնակատարելագործութիւն:

Մեծ փիլիսոփայի այս վերջին կարծիքը, հասարակական գործունէութեան մասին ի հարկէ, չափազանց վիճելի է, բայց նա ունի իր որոշ հիմքը: Ռուս մամուլը դեռ իր կարծիքն և առարկութիւնները չէ արտայայտում, բայց կասկած չը կայ, որ դարձեալ մի ահագին գրականութիւն կը ստեղծվի այդ առիթով:

Հ. Առաքելեան

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Պետերբուրգի քաղաքային ընտրութիւնների սօցիալ-դեմօկրատների կոնֆերենցիայի համար րայօնական պատգամաւորներ ընտրելու համաձայնութեան հարցը, համարեա թէ, վերջացել է: Ընտրութիւնների հետևանքներից հաստատապէս կարելի է ասել, որ կոնֆերենցիայի մեծամասնութիւնը կը կազմեն «մեծամասնականները»: Առայժմ ընտրված են 27 «մեծամասնականներ» և 16 «փոքրամասնականներ». վերընտրութիւնները չեն կարող փոխել այժմեան յարաբերութիւնը:

—Եղբայրասպան պատերազմը բանւորական կուսակցութիւնների մէջ օր օրի վրա սաստկանում է Լօձում. կռւող կողմերը ծայրայեղութիւնների են հասնում: «Варш. Курьеръ» լրագրի թղթակցի ասելով, Բալուցկայա փողոցում, անցորդ Միխայլովսկու վրա հինգ անգամ գնդակ են արձակել: Արագ օգնութիւնը ուզեցել է վիրաւորվածին հիւանդանոց տանել, բայց հաւաքված բազմութիւնը արգելք է եղել: «Утр. Обозр.»-ի մէջ տպագրված է Լօձից ուղարկված թղթակցութիւնից մի կտոր, որը առաջ ենք բերում. «Ամբողջ քաղաքը բառի բուն նշանակութեամբ մարդկային արիւնով ողողված է, որը վերջին շաբաթս աւելի առատութեամբ է հոսում: Մահվան դէպքերը չափազանց շատ են, օր մէջ շարունակ լսվում են ատրճանակների տրաքոցները և որբացած բանւոր ընտանիքների ողբեր»: «Лодз. Цейт.» լրագրի ասելով, վերջին 5 օրվայ մէջ եղբայրասպանութիւնից մեռել են 55 հոգի, որոնցից 14 ը սպանված, իսկ մնացեալները ծանր վիրաւորված են: «Русь» լրագրի մէջ կարդում ենք. «Դրութիւնը չէ լաւանում: Վերջին 4 օրվայ մէջ «օգնութեան տեսող» կառքը կանչում էին 50 անգամ: Կազմված է յատուկ լուկապարի կօմիտէտ»:

ՆՈՐ ՓՈԽԱՌՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Ռուսաստանի նոր փոխառութեան հարցը, ինչպէս երևում է, դեռ ևս ոչ միայն ֆրանսիական մամուլի էջերից չէ իջնում, այլև ընդհակառակը, այժմ նրանով աւելի շատ են զբաղված: Բանի որ այդ մասին միմիայն Ժօրէսի «Humanite» թերթն էր գրողը, միւս բոլոր կաշառված թերթերը ձէն ու ծպտուն չէին հանում. կարծես թէ այդ հարցը իսկի գոյութիւն էլ չունէր: Եւ դա, ի հարկէ, չափազանց նպաստում էր մութ անկիւններում գործ կատարողներին, որովհետև նրանք շատ լաւ գիտէին, որ Ժօրէսի թերթի ընթերցողները չեն, որ անտեսած կոպէկներ ունենան փոխառութեան օբլիգացիաներ ու կուպօններ առնելու համար: Իսկ այս շրջանի մարդիկ երբեք «Humanité» չեն կարդում, ուստի և իրանց կարդացած միւս թերթերից իսկի չեն էլ կարողանայ իմանալ Ռուսաստանի բիւջէի իսկական դրութիւնը:

Թէև, ճիշտ է, այդ փոխառութեան դէմ բողոքելու և հասարակական կարծիքը պարզաբանելու համար մի շարք միտինգներ էլ էին կազմում սօցիալիստական կուսակցութիւնները, ուր միշտ գնում են խօսելու հռչակաւոր Անատօլ Ֆրանսը, Պրեսանսէն, ինքը Ժօրէսը և այլ շատ այդ կարգի ականաւոր քաղաքական գործիչներ, բայց դրանք էլ անկարող էին իրանց նպատակին հասնել ու պէտք եղած ազդեցութիւնը ունենալ, որովհետև մենք շատ լաւ գիտենք, թէ այդ միտինգներին ինչ տարրեր են յաճախում. այդ միտինգներին սովորաբար գնում են կիսով չափ ուսանողներ ու ինտելիգենտներ և կիսով չափ էլ կիսաքաղցած պրօլետարներ:

Սակայն խնդիրը բոլորովին այլ կերպարանք է ստացել այն օրվանից ի վեր, երբ պարլամէնտում սօցիալիստական պատգամաւոր Վայանի հարցապնդումը եղաւ, ի պատասխան որի արտաքին գործերի մինիստր Պիշօնը ասաց, որ ռուսական նոր փոխառութեան մասին խօսք չը կայ և չէ էլ կարող լինել: Այդ օրվանից արդէն միւս թերթերն էլ իրանց դաքարեան պապանձումը խզել են և շարունակ այդ խնդրին են վերադառնում:

«Այն օրվանից ի վեր,—ասում է «Товарищъ» թերթի պարիզեան յատուկ թղթակիցը,—երբ պարլամէնտում և մամուլի մէջ ռուսական փոխառութեան հարցը դրվեց, ոչ թէ բացառապէս կուսակցական, այլ ընդհանուր պետական հողի վրա, խնդիրը բոլորովին ուրիշ կերպարանք ստացաւ: Մի քանի անկաշառ թերթերի կողմից (Bevue, Censeur, Grande Bevue և այլն) անցեալ փոխառութիւնների և Ֆրանսիայի արդի ֆինանսական դրութեան մասին արված մի շարք մերկացումները հետզհետէ բացեցին այն բոլորի աչքերը, որոնք ուզում էին տեսնել ու իմանալ այն բոլորը, որոնց մասին միմիայն միտինգներում էին բղաւում, Միւս կողմից թէ կառավարութիւնը և թէ մանաւանդ Կլեմանսօն սկսեցին այդ հարցի մասին զեկուցումներ և կօնֆիդենցիալ տեղեկութիւններ ստանալ զանազան պաշտօնական (դեսպաններ, կառավարչական ագենտներ) և մասնաւոր անձերից»:

Թղթակցի ասելով, այդ նամակներից մէկի հեղինակը մի ռուս քաղաքական գործիչ է, որը մի շարք պատմական փաստեր բերելով այն մասին, թէ ինչպիսի յետադիմական և վատ ազդեցութիւն է ունեցել ֆրանսիական փողերով ամրապնդված ռուս բիւրօկրատիան Ֆրանսիայի ներքին քաղաքականութեան վրա անցեալում, զգուշացնում է Կլեմանսօյին և ապագայի վերաբերեալ: Նա զգուշացնում է նրան նոյնպէս և անգլօ-ռուս-ֆրանսիական համաձայնութեան մասին, ասելով՝ «եթէ այդ համաձայնութիւնը լինելու է ռուսական նոր փոխառութեան գնով, այդ պարագայում լաւ իմացէք, որ ռուսաց կառավարութիւնը ձեզ կը դաւաճանէ, իսկ ռուս ժողովուրդն էլ ձեզ չի ների այդ բանը»:

«Եւ յանուն Ռուսաստանի ու Ֆրանսիայի այն մշտնջենական ու բարձր շահերի,—շարունակում է նոյն նամակի ռուս հեղինակը,—որոնք ներկայ մոմենտում միախառնվում են առաջադիմութեան և քաղաքակրթութեան շահերի հետ, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեմօկրատները, դեռ ևս հաւատալով ձեր կառավարութեանը, դիմում են ձեզ, խնդրելով, որ թոյլ չը տաք այդ ոճրագործութիւնը կատարվելու: Ձեր մինիստր պ. Պիշօնը յայտարարեց, թէ ռուսաց փոխառութեան մասին խօսք չը կայ և չէ էլ կարող լինել: Բայց նա չասաց, թէ փոխառութիւնը չի լինի այս կամ այն ձևով: Իսկ մենք գիտենք, և դուք էլ աւելի լաւ գիտէք, որ փոխառութիւնը թագուն կերպով պատրաստվում է Ֆրանսիայում և հէնց Պարիզում: Միայն դուք և ֆրանսիական կառավարութիւնը կարող է խանգարել գիշատիչների շայկային նոր միլիարդներ նետել ռուսաց հակայեղափոխութեան և եւրօպական ռէակցիայի որկորը»:

«Այս ամբողջ ագիտացիան,—շարունակում է իր կողմից պարիզեան թղթակիցը,—չէր կարող անտարբերութեան մէջ թողնել այնպիսի մարդկանց, ինչպիսին են Կլեմանսօն և իր մերձաւոր աշխատակիցները, մանաւանդ որ պ. Բօմպարը (Պետերբուրգի ֆրանս. դեսպանը) և այլ ագենտներից նրանք շատ լաւ տեղեակ են Ռուսաստանի բիւջէի և կառավարութեան դրութեանը: Եւ մենք գիտենք, որ Կլեմանսօն ու Կայօն (ֆինանսների մինիստրը) մասնաւոր խօսակցութիւնների մէջ խոստացել են անել այն բոլորը, ինչ իրանց իշխանութիւնից է կախված, որպէսզի թոյլ չը տան անամօթ ֆինանսիստներին ու իրանց ագենտներին մութ ճանապարհներով գործելու»:

Եւ յիրաւի, Կայօն նախազգուշացրել է երկաթուղային վագօններ շինող ընկերութեանը,—որի նախագահը յայտնի Ռուվիէն է և որը այդ ընկերութեան քօղի տակ Ռուսաստանի փոխառութեան հարցերով է զբաղվում գլխաւորապէս, որ եթէ այդ ընկերութիւնը չի զբաղվի միմիայն իր վագօններ շինելու գործով, այլ և «քօղարկված» պետական փոխառութիւններ կը սարքի, այն ժամանակ ինքը՝ մինիստրը մի օրինագիծ կը մտցնի պարլամէնտ, որի զօրութեամբ այդ կարգի օպերացիաները պէտք է կանխաւ թոյլատրված լինեն կառավարութեան կողմից:

Ձեն քնում, ի հարկէ, և «գիշատիչները». նրանք էլ իրանց մամուլը ունեն և նրա միջոցով են գործում: Ինչպէս հաղորդում է նոյն թղթակիցը, վերջերս «Matin»-ում (դեռ նապօլէօնական պատերազմի ժամանակից այս թերթը միշտ կաշառվում է ռուսաց կառավարութիւնից) մի անօնիմ առաջնորդող է լոյս տեսել, «Ռուսաստանի բիւջէ» վերնագրով, որի մէջ, առանց որևէ թւանշանների, առանց փաստերի, ներբողներ է երգվում Ռուսաստանի ֆինանսներին, յայտարարելով, թէ այս տարի բիւջէից այնպիսի խոշոր գումարներ են աւելացել, որ կարելի է եղել բոլոր արտաքոյ կարգի ծախսերը ծածկել, այնպէս որ ոչ մի դեֆիցիտ չի լինելու և կառավարութիւնն էլ նոր փոխառութեան կարիք չի ունենայ:

Աւելորդ է, ի հարկէ, այդ կարգի յօդուածների յետին միտքը բացատրել:

Կատիլինա

ԿՈՉՄԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ ՎՐԱ.

Անցեալ 1906 թւականը ծանր տարի էր «Մշակի» համար, ծանր և ահարկու: Դաշնակցութեան խուժանապետները, շլացած թուրք-հայկական ընդհարումների ժամանակ վաստակած փառքով, բռնաբարեցին ժողովրդի ազատ կամքը, սարսեցրին ժողովուրդը, խեղդեցին ազատ խօսքը, մտածողութիւնը, կեղեքեցին, թալանեցին, ծեծեցին, սպանեցին: Տէրրօրը ահաբեկման մէջ էր գցել ազգին. սարսափը տիրել էր ամենքին:

Բայց ահա տառապեալ ժողովրդի աւանդական պաշտպան «Մշակ»-ը այս անգամ էլ լայն բաց արեց իր էջերը, առնելով ճնշվածներին իր հովանաւորութեան ներքոյ: Ազգը սիրտ առաւ. նա ուժգին բողոքեց հայ ենիչերների դէմ. դաւառներից թափվեցին անթիւ բողոքներ, որոնք լի էին խուժանապետների գործած հարստահարութիւններով...:

Խուժանապետները սաստիկ զայրացան և «Մշակին» մատնիչ, դաւաճան անուանեցին: Սակայն խելօք դաշնակցականներ լրջութեամբ վերաբերվեցին մերկացումներին, արդար գտան բողոքները և պատռվեցին: Փառք և պարծանք նրանց:

«Մշակ»-ը 1906 թ. կատարեց իր աւանդական դերը և նա կարող է դրանով պարծենալ, հպարտանալ: Գրիգոր Արծրունու մահից յետոյ երբեք «Մշակ»-ը այնպիսի փայլ չէր ստացել, ինչպէս նա ստացաւ անցեալ տարի: 1906 թւականը փառքի և պարծանքի տարի է «Մշակ»-ի համար և մանաւանդ նրա խմբագիր պ. Ալէքսանդր Քալանթարի համար: Փարատվեց նենգամիտ թշնամիների կարծիքը պ. Քալանթարի հրապարակախօսական գործունէութեան մասին, թշնամիների, որոնք շիտակ հայեացքով չէին նայում նրա գործունէութեան վրա:

«Մշակը» կարող էր շատ զրկանքներ կրել, իսկ պ. Ալէքսանդր Քալանթարը ողջ չէր մնայ: Այո, մենք՝ դաւառացիներս, որոնք տեսնում ենք խուժանապետների բռնութիւնները մեր աչքերի առաջ, մենք, որ սարսափում ու դողում ենք նրանցից, չը համարձակվելով որևէ հակառակ խօսք ասել նրանց հասցէին, որպէս զի նրանց բարկութիւնը չը շարժենք և կեանքը վտանգի մէջ չը գցենք,—մենք համարում էինք «Մշակի» կռիւը սաստիկ յանդուգն և զարմացել էինք պ. Քալանթարի այդ տեսակ համարձակութեան վրա:

Բայց «Մշակը» և նրա խմբագիր պ. Քալանթարը կանգնեցին իրանց կոչման բարձրութեան վրա: Փառք և պարծանք նրանց:

1906 թւականը փայլուն տարի էր «Մշակի» համար և միաժամանակ նրա խմբագիր պ. Ալէքսանդր Քալանթարի համար:

Մաղթում ենք «Մշակին» և նրա խմբագիր պ. Ալէքսանդր Քալանթարին շատ այսպիսի փայլուն տարիներ:

N. N.

Սղնախ.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երէկ, յունվարի 16-ին կայացաւ ժողովարանի անդամների ընդհանուր ժողովը, որ պիտի զբաղվէր հետևեալ հարցերով. 1906 թ. հաշուեկշռի վաւերացումը և 1907 թ. նախահաշուի տեսութիւնը ու նոր աւագների ընտրութիւնը:

1907 թ. հաշուեկշռից երևաց, որ ժողովարանը նախորդ տարիներին, համեմատած նիւթականի կողմից, աւելի ապահով է և դեֆիցիտ չէ ունեցել, շնորհիւ լօտօի խաղին, և առ 1-ն յունվարի 1907 թ. ժողովարանը ունի նոյնիսկ մի կլոր գումար՝ մօտ 13,000 րուբլի:

Ընդհանուր ժողովը այս հաշիւը վաւերացրեց, միայն շատերը նկատեցին, որ հաշուապահութեան ձեւը շատ անկանոն է, առաջարկեցին նոր աւագներին աչքի առաջ ունենալ այդ կարեւոր հանգամանքը եւ այս տարուանից մտցնել կանոնաւոր, (двойная италян. бухгалтерія) հաշուապահութիւն:

1907 թ. նախահաշիւը որոշելու ժամանակ պ. Շիրինեանը առաջարկեց մտցնել նախահաշուի մէջ Զանգեզուրի գաւառի սովեալների օգտին հազար րուբլի: Այդ առաջարկը համակրութիւն եւ արձագանք գտնելով, միաձայն որոշեցին տալ Զանգեզուրի գաւառի թշուառների օգտին հազար րուբլի, առանց խտրութեան կրօնի եւ ազգի:

Աւագների ընտրութիւնը եւս շատ աջող անցաւ: Վերընտրուեցին հինգ հոգի հին աւագներից եւ չորս հոգի նորերը, աւելի թարմ ոյժեր:

Նիստը վերջացաւ գիշերուայ ժամը 2-ին. հանդիսականները բռնեցին վաղօրօք ընթրիքի համար պատրաստուած սեղանների շուրջը եւ ուրախ տրամադրութեան ներքոյ անցկացրին գիշերը մինչեւ առաւօտ:

Նուագում էին երկու երաժշտական խմբերը՝ մուզիկա եւ սազանդար:

Թիֆլիսի ժողովարանը վաղուց էր այսպիսի բարեգործութիւն—ինչպիսին է սովեալներին օգնելը—չէր ունեցել, դրա համար էլ ամէնքը զգացուած եւ ուրախ ընթրում էին, համոզուած լինելով՝ թէեւ այդ գումարը մի կաթիլ է ծովի մէջ, բայց քանի-քանի խեղճերի արցունքներ պիտի սրբէ:

Ալ. Վրթանէսեան

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

(Նամակ Աստրախանից)

Անցեալ դեկտեմբերի 31-ին, կիրակի օրը, ճաշի պատարագից յետոյ նշանակուած էր մեզ մօտ ծխական ժողով առաջնորդական ընտրութիւն կատարելու համար:

Ինչպէս արդէն յայտնի է ընթերցողներին, այս անգամ Վեհափառը բարեհաճել էր անմիջական ընտրութիւն նշանակել եւ ոչ պատուիրակների միջոցով:

Նախագահը ժողովը բանալով առաջարկեց ժողովականներին թեկնածուների անուններ տալ: Սեդրակ քահ. Աղաբալեանը յայտնեց, որ մի խումբ մարդիկ ունենալով նախապատրաստական ժողով, առաջարկում են իրանց կողմից հետեւեալ թեկնածուներին—Մխիթար, Եղիշէ, Ներսէս վարդապետներին եւ Յուսիկ եպիսկոպոսին: Այնուհետեւ ժողովը զբաղուեց այդ թեկնածուներով—նրանց ունեցած գործունէութեամբ, ուղղութեամբ եւ այլն: Ժողովականները այդ առաջարկած թեկնածուների ցանկին աւելացնելով եւ Մատթէոս վարդապետին, դրեցին այդ հինգին գաղտնի քուէարկութեան, որից երեւաց, որ ձայների մեծամասնութիւն ստացել են Յուսիկ եպիսկոպոս եւ Եղիշէ վարդ. Մուրադեան:

Առաջնորդական ընտրութիւնից յետոյ նոյն Սեդրակ քահանան արեց ներկայ եղող ժողովականներին մի շատ կարեւոր առաջարկութիւն. ինչպէս յայտնի է, հանգուցեալ Արիստակէս սրբազանը Թիֆլիսի հայ հասարակութիւնից ունէր ստացած 6000 ր., որը տրուած էր հանգուցեալին բժշկուելու համար. բայց նա ոչ միայն չը գործադրեց այդ փողը իր բժշկութեան համար, այլ մինչ խօսակցութեան ժամանակ, երբ խօսք էր բացւում այդ 6000-ի մասին, նա ասում էր. «Ժողովրդի այդ կոպէկները ես պէտք է նորից վերադարձնեմ ժողովրդին, ես իրաւունք չունեմ նրան ձեռք տալու»: Եւ այդ խօսքերը նա ասում էր միշտ, ամեն տեղ. բայց սրբազանը այսօր դժբաղդաբար կտակ չէ թողել եւ այդ փողերը պէտք է անցնեն էջմիածին. ահա հ. Աղաբալեանի առաջարկութիւնը հէնց այդ էր. ուղարկել մի պատգամաւորութիւն Աստրախանի հայ հասարակութեան կողմից Վեհափառ Կաթողիկոսին եւ խնդրել, որ հանգուցեալ Արիստակէս արքեպիսկոպոսից մնացած այդ 6000 ր. յատկացնվի Աստրախանի նորաբաց թեմական դպրոցին, որը, նոր բացւելով, ունի նիւթական շատ մեծ կարիք եւ որի բացւելուն այնքան աշխատել է հանգուցեալը. ժողովը մեծ բաւականութեամբ ընդունեց այդ առաջարկութիւնը եւ ընտրեց այդ գործի համար ներկայացուցիչներ էջմիածնում պ. Լեւոն, Մեսրոպ եւ Մխիթար վարդապետներին եւ Աստրախանի թեմական դպրոցի հոգաբարձու պ. Գ. Սուլթանեանին, որը այժմ գտնվում է Թիֆլիսում. այդ չորս ներկայացուցիչները Վեհափառին ներկայանալով՝ Աստրախանի հասարակութեան կողմից պէտք է միջնորդեն, որ յարգվի այդ խնդիրը:

Ժողովը որոշեց, որ պ. Սուլթանեանի ճանապարհածախսը Թիֆլիսից—էջմիածին հոգացվի տեղիս եկեղեցիներից:

Ս. քահ. Ասլանեանց

Աստրախան, 3 յունվարի

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

Յունվարի 12-ին

Ծննդեան օրերը մեզանում անցան բաւականին լաւ. Յունվարի 2-ին, 3-ին եւ 4 ին հայոց ուսումնարանի վարչութիւնն էր տօնածառ սարքել աշակերտների ու աշակերտուհիների համար, իսկ 7-ին քաղաքային ժողովարանն էր սարքել իր անդամների երեխաների համար: Պէտք է ասել որ դպրոցի վարչութիւնը ոչ մի ջանք չէր խնայել, որ տօնածառը ուրախ անցնի: Մուտքի վճար էին սահմանել իւրաքանչիւր աշակերտի թոշակի 5%-ը: Ժողովարանի տօնածառը չունեցաւ այն աջողութիւնը, ինչ որ սպասւում էր, որովհետեւ ծախսել էին մօտ 300 րուբլի 130 տղի համար, բայց երեխաները ոչ մի բաւականութիւն չը ստացան նրա համար, որ ժողովարանի վարչութիւնը գործին նայել էր թեթեւ աչքով եւ գործի ամբողջ ծանրութիւնը ձգել էր մի անդամի վրա:

Իսկ նա էլ իր կողմից թեթեւ նայելով գործին՝ [illegible] չէր արել դիմելու տեղական ոյժերին իրան օգնելու համար: Այդ մենակութիւնն էր պատճառը, թէեւ տօնածառի երեկոյեան մի քանի վարժուհիներ օգնում էին, որ մեծերը փոքրիկների տոմսակ էին վերցնում եւ ընդհակառակը, եւ ըստ երեւոյթին ընծաներն էլ հաւասարաչափ չէին բաժանած: Այս դեռ ոչինչ: Գլխաւորն այն է, որ վարչութիւնը հոգս չէր քաշել այն մասին, թէ ով էր կառավարելու եւ ուրախացնելու այդ երեկոյեան երեխաներին: Մինչ չը պտտվեց, որ անմեղ երեխաների թոթով լեզուները բանար, բաւարարութիւն տար մանկական խաղասիրութեանը: Խեղճ երեխաները մեծերի պէս եկան ու գնացին:

Եթէ այս տեսակ պիտի սարքեն տօնածառ, գալ տարի էլ, իմ համեստ խորհուրդս է, չը սարքել եւ 300 րուբլու մեղքը չը մտնել, երբ մանուկները բաւականութիւն չը պիտի ստանան:

Առ հասարակ մեր քաղաքային ժողովարանում ոչ մի կարգ ու կանոն չէ նկատւում: Ամեն մի հերթական աւագ իրան իրաւունք է համարում ժողովարանում անօրինել այնպէս, ինչպէս ինքն է ցանկանում: Մոռանում են այդ պարոնները, որ իրանք հերթական են ոչ թէ նրա համար, որ իրանց քէֆը ինչ որ ուզէ այն անեն, ոչ, այլ նրա համար, որ հսկեն՝ ժողովարանում սահմանված կարգ ու կանոնը ոչ ոք չը խանգարէ: Մէկ օր տեսնում ես ընթերցարանը դարձնում են թղթախաղի սենեակ, մէկ օր լօտօյի եւ նոյնիսկ ճաշարան: Մեր յարգելի աւագները բուֆէտչիկի շահը աւելի բարձր են գնահատում, քան իրանց անդամների մտաւոր եւ հոգեկան բաւականութիւնները:

Աւագների այդ թեթեւ վերաբերմունքն է պատճառը, որ ժողովարանի գրադարանում ոչ մի կարգ ու կանոն չը կայ: Ամեն ոք իրան իրաւունք է համարում սեղանի վրայից ամսագիր եւ օրագիր վերցնել եւ ամիսներով պահել: Ոչ ոք խօսող չը կայ:

Այսքան կանգ չէի առնի մեր քաղաքի ժողովարանի վրա, եթէ ի նկատի չունենայի այն, որ այստեղ են հաւաքվում Ախալքալաքի ինտելիգենտ, վաճառական եւ ծառայող դասը, որ յաւակնութիւն ունեն կարծելու, որ իրանք են կազմում քաղաքիս բանիմաց մասը:

Էն—էն

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Յունվարի 18-ին

Հայ-Թուրքական ընդհարումները վերջացան առանց զոհեր տանելու Ղուբայում: Շնորհիւ հայերի գործ դրած խոհեմութեան, խոնարհութեան եւ պարկեշտութեան՝ Ղուբան ազատ մնաց կոտորածից: Եթէ լինէին մի քանի տաքգլուխ անհատներ, Ղուբայի հայերը մի ժամվայ մէջ բոլորը կը կոտորվէին: Եկան դաշնակցականները, որոնք 10—20 մարդով օգնութիւն առաջարկեցին քաղաքի հայերին, սակայն նրանց մերժեցին եւ համարեա ուժով հեռացրին, որովհետեւ նրանց ներկայութիւնը սաստիկ կը կատաղեցնէր թուրքերին եւ առաջ կը բերէր անխուսափելի կոտորած...

Երբ լուրեր էին պտտվում, թէ թուրքերը պէտք է յարձակվեն հայերի վրա, հայերից շատերը լալով եւ արտասուքը աչքերին գալիս էին Փանեան քահանայի մօտ, խնդրելով նրանից փրկութիւն: Տէր-Խաչատուրը գնում էր գաւառապետի մօտ եւ օգնութիւն հայցում, գնում էր ղազիների, մոլլաների, թուրքաց երեւելիների մօտ եւ խնդրում նրանց հեռու պահել հայերին կոտորածից, գնում էր թուրքաց մզկիթները խաչով եւ աւետարանով եւ համերաշխութիւն քարոզում, գնում էր թուրքաց հանգստարանը եւ եղբայրութիւն, սէր, միութիւն էր քարոզում հայերի եւ թուրքերի մէջ: Նա սպառնալիք, նախատինք էր թափում տաքգլուխ հայ երիտասարդների վրա: Հրապարակով արտայայտում ենք Խաչատուր քահանայ Փանեանին խորին շնորհակալութիւն ժողովրդին փրկելու համար:

Երէցփոխ պ. Աւետիս Մարտիրոսեան, որը երկու տարի (1903—1905) մեծ ջանքեր թափեց, ազատելով հայոց դպրոցը փակումից, [illegible] եռանդով շարունակում է կառավարել եկեղեցին եւ դպրոցը: Նա տուեց հաշիւ, որով մոմավաճառութիւնից իւրաքանչիւր ամսից տուեց 100 րուբլի արդիւնք, իսկ նախկին երէցփոխները պակաս էին ցոյց տալիս:

Հայոց եկեղեցական ծխական դպրոցը այժմ երկդասեան է հինգ բաժանմունքով: Դպրոցը կառավարում են երկու ուսուցիչ եւ մէկ քահանայ: Աշակերտ աշակերտուհիների թիւը հասնում է 70-ի: Դպրոցը պահպանվում է եկեղեցական արդիւնքով եւ աշակերտաց թոշակագումարով. ունի երեք դասարան: Դպրոցի վրա տարեկան ծախսւում է մօտ 1400 ր.:

N. N.

ՆԱՄԱԿ ԵՒՊԱՏՈՐԻԱՅԻՑ

Յունվարի 10-ին

Արդէն բաւական ժամանակ է, որ տեղս գոյութիւն ունի կիրակնօրեայ դպրոց, ուր յաճախում են հասակաւորներից շատերը: Կիրակնօրեայ դպրոցի անհրաժեշտութիւնը մի քաղաքում, որպիսին մերն է, աւելի քան անուրանալի է, որովհետեւ մի այդպիսի հիմնարկութեան բացակայութիւնը կարող էր մեծ զարկ տալ մայրենի լեզուի մոռանալուն: Բացի մայրենի լեզուի ուսուցումից, մեր կիրակ. դպրոցում յաճախակի տեղի են ունենում նաեւ գիտական բնաւորութիւն կրող դասախօսութիւններ, որոնք, կարելի է ասել, բաւական առաջ են տանում ինքնակրթութեան գործը:

Կիրակնօրեայ դպրոցի մասին յիշելու շարժառիթներից մէկն այն է, որ նրա սաները ձեռնարկել են մի այնպիսի մեծ գործի իրականացման, որի մասին լսելը [illegible] կը լինէր: Նրանք մօտ օրերումս մեր գրադարան-ընթերցարանի հիմքը դրին. գրադարանը՝ ի յիշատակ Խաչատուր Աբովեանի, վերջինիս ծննդեան հարիւրամեակը լրանալու առիթով՝ նրա անունով կնքեցին:

Թէեւ մեր դպրոցը գրադարան ունի, սակայն նա չէ կարող բաւականութիւն տալ ընթերցողներին, նախ այն պատճառով, որ այնտեղ շատ գրքեր չը կան, երկրորդն էլ՝ որ պարբերական հրատարակութիւններից ամենից անհրաժեշտները, որպիսին օրաթերթերն ու շաբաթաթերթերն են—չէ ստանում:

Մի քանի օր կը լինի, ինչ որ մեր կիրակնօրեայ դպրոցի աշակերտներն ու աշակերտուհիները մի գրական երեկոյթ տուին յօգուտ բացվելիք գրադարանին: Երեկոյթին այնքան բազմութիւն էր հաւաքվել, որ դպրոցի դահլիճում ու մնացած սենեակներում նստելու տեղ անգամ չէր մնացել: Ժամը 8 ին էր, երբ սկսվեց երեկոյթի գրական մասը «Լուսին չը կայ» քայլերգով, որը երեկոյթի վերջում՝ հասարակութեան խնդրանօք՝ կրկնութեան արժանացաւ: Բաւական տպաւորիչ էր օր. Մանուկեանի կարդացած «Մայրենի լեզու» խորագիր կրող՝ «Վէրք Հայաստանի»-ից վերցրած հատուածը, օր. Թ. Բաբիեանի «Ախ մեր սիրտը» մեներգը եւ մեր դպրոցի նախկին ուսուցիչ պ. Վ. Բաբիեանի արտասանած «Բուզդայի ծխատ» բանաստեղծութիւնը: Օր. Բաբիեանի մասին պէտք է ասել, որ նա բաւական աջող էր երգում, մանաւանդ մինոր ելեւէջները. ստորին նոտաները երգելու ժամանակ միայն քիչ նկատելի էր նրա ձայնի տեմբրի փոփոխութիւնը, որը սակաւ չափով նպաստում էր էֆֆէկտի թուլացման:

Դպրոցի հոգաբարձուներից պ. Գ. Բուշնեանը կարդաց Գամառ-Քաթիպայի Ղրիմի բարբառով ծիծաղաշարժ մի կտոր: Խօսեց մեր դպրոցի ուսուցիչ պ. Ա. Տ.-Յովսէփեանը կիրակնօրեայ դպրոցի նշանակութեան եւ նրա կատարելիք դերի մասին, որը վերջացրեց իր խօսքը հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրելով երեկոյթի հերոսների—կիրակն. դպրոցի սաների վրա, միեւնոյն ժամանակ խնդրելով կարող ոյժերի աջակցութիւնը մի այնպիսի պատասխանատու գործի համար, որպիսին կիրակնօրեայ դպրոցի կառավարելն է:

Երգեցիկ խումբը բանախօսութիւններից ու ոտանաւորներից յետոյ երգում էր հաւաձայն՝ ժողովրդական եւ ազգային երգեր: Մէջընդմէջ նուագում էր դաշնամուրի վրա (դպրոցն ունի իր սեփական դաշնամուրը) օր. Թ. Բոզաջեանը: Մի խօսքով՝ մեր կիրակնօրեայ դպրոցի սաների տուած այդ երեկոյթը բաւական աջող էր թէ բարոյական տեսակէտով եւ թէ նիւթական տեսակէտներից: Ծախսը հանած՝ զուտ արդիւնք մնաց 159 րուբլի 63 կոպ., որը արվեց գրադարանի համար գրքեր եւ թերթեր բերել տալու համար կազմված յանձնաժողովին:

Մհատ

ՕՐՄԻՋԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Նամակ Գերմանիայից)

Կարեւոր եմ համարում «Մշակի» 282 համարում տպված օրմիջեայ դպրոցի խնդրի մասին Ալէքսանդրապօլի ս. Լուսաւորիչ եկեղեցու ուսումնարանի մանկավարժական խորհրդի վճիռներից մի քանիսը քննութեան առնել, քանի որ հրատարակված է հասարակական քննութեան համար եւ մանաւանդ որ այդ խնդիրները կարող են մեր կեանքում իրանց նշանակութիւնը ունենալ:

Նախ քան բուն խնդրին անցնելը, նկատենք, որ մի ուրախալի երեւոյթ է, որ մեզանում սկսել են կրթական խնդրի վրա ուշադրութիւն դարձնել եւ միջոցներ մտածել նրա բարւոքման համար: Ուրախալի է, որ մեր հասարակութեան գոնէ որոշ մասը զգացել են, որ մեր ապագան դպրոցներից է կախված, ուստի եւ առանձին ուշադրութեան առարկայ պէտք է դարձնել դպրոցական գործը: Եւ Ալէքսանդրապօլի մանկավարժական խորհրդի այդ վճիռները իբրեւ վերոյիշեալը ապացուցող հանգամանք, ուրախալի եւ գնահատելի է: Սակայն դժբաղդն այն է, որ վերին աստիճանի վնասակար եզրակացութիւնների է հասել խորհուրդը. ինչպէս յայտնի է, մանկավարժական խորհուրդը զանազան գործնական (թէեւ ոչ այնքան հիմնաւոր) եւ մանաւանդ մանկավարժական հայեցակէտներից այն եզրակացութեանն է եկել, որ մեր մէջ այնպիսի դպրոցական ձեւ պէտք է մտցնել, որը, որքան ինձ յայտնի է, դեռ գործադրութեան մէջ չէ մտել եւ ոչ մի «կուլտուրական» երկրում, եւ այդ հսկայ ռեֆօրմի պատիւը, ինչպէս երեւում է, հայ ժողովրդին է մնալու:

Որո՞նք են մանկավարժական այն հիմքերը, որոնք հարկադրել են մեր ուսուցիչներին օրմիջեայ դպրոցի տարօրինակ մտքին հասցնելու. այն՝ որ օրմիջեայ պարապմունքների ժամանակ աշակերտները աւելի ուշադիր, աշխոյժ եւ դիւրըմբռնող կը լինեն, երկրորդ, որ ամեն օր դպրոց յաճախելը երեխաների համար ձանձրալի է, շատերը դասերից փախչում են, արհեստներ կարելի էր սովորեցնել օրմիջեայի ժամանակ եւ այլն եւ այլն:

Մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ ինչպէս երեւում է ամեն բան եղել է, բացի մանկավարժօրէն մտածելուց: Այն հիմքը, թէ դպրոցները օրմիջեայ պէտք է լինեն, քանի որ աշակերտները աւելի ուշադիր, դիւրըմբռնող կը լինեն, այնինչ ամենօրեայի ժամանակ այդ բանը չը կայ, հիմնովին սխալ է: Եթէ մի դպրոց կառավարվում է մանկավարժական ոգով, եթէ ուսուցիչը պարապում է իր սաների հետ ըստ մանկավարժութեան պահանջների եւ հասկացողութիւն ունի երեխայի հոգեբանութեան մասին, կարող ենք դրականօրէն պնդել, որ ամենօրեայ դպրոցները ոչ թէ որեւէ վնաս տալ կարող են, այլ այդպիսի դպրոցները անհրաժեշտութիւններ են: Հաւաստացած եղէք, որ երեխան ամենօրեայ պարապմունքներից չի յօգնի, անուշադիր լինի, եթէ դպրոցում հասկանում են նրան, եթէ նրան կերակրում են այն բանով, որը տանելի է նրա հոգեկան կարողութիւններին, մի խօսքով, եթէ դպրոցում չէ գործադրվում տէր Թողիկից մնացած մանկավարժական ձեւերը: Հաւաստացած եղէք, որ Գերմանիայի եւ կամ Շվէյցարիայի տարրական դպրոցների երեխաների համար մի դժբաղդութիւն կը լինէր, եթէ դպրոցները օրմիջեայ դարձնէին. չէ որ դրանով երեխաներին զրկած կը լինէին բաղդաւորութիւնից:

Մեր մանկավարժների այդ որոշումներից կարելի է եզրակացնել, թէ որքան թիւր հասկացողութիւն ունեն դպրոց ասած բանի մասին: Դպրոցը ոչ թէ երեխաների գլուխը մի քանի այբ ու բեն եւ այլ զանազան գիտութիւններ կոխելու տեղ է, այլ մի կրթական հաստատութիւն, ուր «դաստիարակւում եւ դաստիարակում են» երեխաներին. մեր մօտ տարօրինակ կերպով միակողմանի են հասկանում: Դպրոցում ոչ միայն սովորեցնում, այլ եւ եւ կրթում են, բնաւորութիւններ են պատրաստում: Եթէ մեր մանկավարժներին այս ճշմարտութիւնը ծանօթ լինէր եւ կամ նրանց համար գնահատելի, այդ որոշումներին չէին հասնի: Որովհետեւ կրթելու համար անհրաժեշտ է միշտական յարաբերութիւն ուսուցչի եւ աշակերտների մէջ, միշտական ազդեցութիւն ուսուցչի կողմից. եթէ ամբողջ օրերով ընդհատւում է հոգեկան այդ յարաբերութիւնը, այն ժամանակ թուլանում է ուսուցչի բարոյական ազդեցութիւնը եւ երկու կողմից յարաբերութեան սերտութիւնը չի խորանում: Օրմիջեայ դպրոցները մեզ համար մանաւանդ մի մեծ դժբաղդութիւն կը լինէին, ուր ուսուցչի բարոյական ազդեցութեան աւելի մեծ կարիք կայ, քանի որ մենք ընտանիք ասած բանը չունենք, մենք ընտանեկան կրթութիւն ասած բանի մասին գաղափար չունենք: Ուր ընտանիքը չէ օգնում դպրոցի կրթական գործին իր ընտանեկան կրթութեամբ, այնտեղ ամենօրեայ դպրոցները աւելի անհրաժեշտութիւն են, իսկ օրմիջեայ դպրոցներ մտցնելը մի հակակուլտուրական գործ:

Փրկութեան ճանապարհը այդ չէ, որը բռնել են մեր մանկավարժները:

Տրամաբանօրէն մտածելով կարելի է մի քանի եզրակացութիւններ հանել Ալէքսանդրապօլի ս. Լուսաւորիչ եկեղեցու դպրոցի ներկայ մասին, որ այդ դպրոցում դեռ չէ իշխում մանկավարժական ոգին եւ մանկավարժօրէն կազմակերպված դպրոց չէ նա դեռ՝ այնտեղ աշակերտները յոգնում են, անուշադիր են, ձանձրանում են, դասերից փախչում են, (չէ որ դրանք են այն հիմքերը, որոնք մանկավարժներին օրմիջեայի դպրոցի գաղափարին են մօտեցրել). իսկ եթէ մի դպրոցում այս բոլորը գոյութիւն ունի, նշանակում է այնտեղ դեռ երջանկայիշատակ տէր-Թողիկի հոգին եթէ ոչ ամբողջովին, գոնէ մասամբ իշխում է: Այս կասէի, փորձեցէք աշակերտների այդ ձանձրոյթի, անուշադրութեան, դասերից խոյս տալու պատճառները ձեր ուսուցիչների մէջ որոնել եւ ահա հասած կը լինէք երեւոյթների աւելի ճիշտ ըմբռնմանը եւ կը գտնէք փրկութեան աւելի ճիշտ ճանապարհը: Օրմիջեայ դպրոցը ոչինչ չի օգնի, եթէ իմ ակնարկած փրկութեան ճանապարհը չի գտնված: Կը ցանկայի ասելիքս գերմանացի յայտնի մանկավարժ Զալցմանի հետեւեալ յարմարող խօսքերովը վերջացնել. «Սանի պակասութիւնների եւ անբարոյական կողմերի հիմքերը ուսուցիչը իր մէջ պէտք է որոնէ»:

Գ. Եդիլեան

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Մի՞թէ մինիստրները աւելի քիչ փորձառութեան են ենթարկվում, քան պարլամենտի անդամները, թէ՞ նրանք աւելի քիչ իշխանութիւն ունեն: Պարլամենտի անդամները կարող են պետութեան վրա ազդել միմիայն կողմնակի կերպով, կառավարութեան միջոցով: Իսկ այս վերջինը անմիջական կերպով է օգտվում իր ունեցած պետական ահագին իշխանութեամբ: Պարլամենտում միշտ լինում են միմեանցից բոլորովին տարբեր ուղղութիւնների ներկայացուցիչները, մեծամասնութիւնը փոքրամասնութեան քննադատութեանն է ենթարկվում: Իսկ մինիստրութիւնը պէտք է միեւնոյն ուղղութեան պատկանող անձերից կազմված լինի. եթէ մի տեղ խառն մինիստրութիւն է կազմված, այդ միայն ցոյց է տալիս, որ միացած կուսակցութիւնների մէջ եղած տարակարծիքութիւնը այնքան սկզբունքային չէ: Պետութիւնը կարելի է կառավարել, չը ղեկավարվելով մի որեւէ որոշ սկզբունքով, բայց անհնարին է նրան կառավարել, միաժամանակ տարբեր սկզբունքների վրա յենվելով: Այսպէս ուրեմն, կառավարութեան մէջ փոքրամասնութեան կօնտրոլ չը կայ մեծամասնութեան վերաբերեալ, եւ կառավարութեան իշխանութիւնը արդի պետութեան մէջ աւելի ընդարձակ է ու աւելի անմիջական, քան պարլամենտական իշխանութիւնը: Եւ չը նայելով այդ բոլորին, Րիտտինգհաուզէնը դարձեալ ասում է, թէ ամեն մի պարլամենտ անպատճառ դաւաճանում է ժողովրդին մինչեւ իսկ այն ժամանակ, երբ նա կատարելապէս ժողովրդից կախումն ունի, երբ նա ընտրված է ընտրողական ամենաընդարձակ իրաւունքների հիման վրա եւ ամենաազատ ընտրողական պայմանների մէջ, երբ նա ընտրված է շատ կարճ ժամանակվայ շրջանի համար—2 կամ 3 տարով—եւ ռեֆերենդումի ու նախաձեռնութեան կօնտրոլի տակ է գտնվում, այնինչ մինիստրութիւնը, բաւական է որ նա ընտրովի լինի, դրանով արդէն նա ժողովրդի ամենախոնարհ ծառան կը դառնայ:

Երբեմն, սակայն, Րիտտինգհաուզէնի մէջ կասկածներ են ծագում այն մասին, որ մի մեծ կենտրոնական իշխանութեանը իր պետութեան մէջ հակադրված է միայն 10,000 սեկցիաների բաժանած ժողովուրդը: Մի քանի դէպքերում նա հսկիչ կօմիսիայի մասին է ակնարկում, որը անհրաժեշտ կը լինէր, եւ որը, ի հարկէ, ընտրովի լինելով, կը հանդիսանար իբրեւ ներկայացուցիչների մի ժողով: Անմիջական օրէնսդրութեան կողմնակիցները որչափ էլ աշխատում, այս ու այն կողմն էին ընկնում, այնուամենայնիւ նրանց բոլոր ջանքերը ի զուր էին լինում. եթէ նրանք ցանկանում են, որ օրէնսդրական ժողովների ֆունկցիաները ճշտութեամբ կատարվեն, նրանք ստիպված են լինում այդ ֆունկցիաները,—բացի օրէնքները վերջնականապէս քուէարկելու գործողութիւնից,—տեղափոխել նորից ներկայացուցչական ժողովները: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ բոլորովին միեւնոյն է, թէ այդպիսի ժողովները կը կոչվեն պարլամենտ, խմբագրական կօմիսիա, թէ վերահսկիչ կօմիտետ եթէ պարլամենտի հակառակորդների իդիօսինկրազիա-ն (մի որեւէ առարկայից հիւանդոտ զզուելութիւն ստանալը) վերաբերւում է միմիայն անունը, այդ պարագայում շատ հեշտ է նրանց բժշկելը: Ներկայացուցչական սիստեմը միշտ կը վերածնվի, որչափ էլ նրանց գլխին մահացու հարուածներ հասցնեն:

Խմբագրական կօմիսիան եւ վերահսկիչ կօմիտէտը չեն կարողանայ գործ կատարել, առանց որոշ իրաւունքների. եթէ նրանց խորհրդակցութիւնները մի որեւէ նպատակի պիտի ձգտեն, այն ժամանակ նրանք պիտի իրաւունք ունենան որոշումներ կայացնելու, իսկ կառավարութիւնն էլ պարտաւորված պիտի լինի արժանի յարգանքով վերաբերվել այդ որոշումներին: Այդպիսով, անկարելի է նրանց մի յայտնի չափով ընդարձակ իրաւունքներ չը տալ:

Եթէ այդ ժողովներում պիտի մասնակցեն կարելի եղածին չափ բոլոր ընդհանուր եւ խմբական շահերի, բոլոր կուսակցութիւնների եւ ժողովրդի ամեն ուղղութիւնների ներկայացուցիչները, այն ժամանակ հարկ կը լինէր այդ ժողովի մէջ թողնելու այնպիսի մի մեծ թւով մարդիկ,—որը շատ համապատասխան է եւ խորհրդակցական պարլամենտի նպատակներին,—հետեւապէս եւ այնչափ մօտաւորապէս անդամներ, որչափ սովորաբար լինում են արդի պարլամենտներում: Եւ վերջ ի վերջոյ ակներեւ կը դառնայ, որ միաժամանակ նիստ ունեցող երկու պալատների ժողովները, որոնք երկուսն էլ ընտրված են ուղղակի ձայնատուութեան իրաւունքով, ընդհանուր առմամբ կազմված, հետեւապէս, եւ միատեսակ կուսակցութիւններից, իրանց միատեսակ համեմատական չափով, իրանց փոխադարձաբար ու յաճախ միմեանց հետ հիւսվող ֆունկցիաներով, բոլորովին իզուր տեղը ոյժերի վատնումն են ներկայացնում. վերջ ի վերջոյ ակներեւ կը դառնայ, որ իրապէս ոչինչ չի փոխվի, այլ ընդհակառակը այդ ներկայացուցչական հաստատութիւնների աշխատանքը շատ աւելի կը թեթեւանայ ու պարզ կերպարանք կը ստանայ, եթէ բոլոր աշխատանքները մի պալատին անձնվին, խմբագրական կօմիսիան վերահսկիչ կօմիտէտի հետ միացնելով: Եւ այն ժամանակ մենք վերջնապէս այն պայմաններին կը հասնինք, ինչ այժմ արդէն գոյութիւն ունեն Շվէյցարիայում՝ ժողովրդային ներկայացուցչութիւն, որը կօնտրոլի է ենթարկվում ժողովրդային ձայնատուութեամբ:

Բայց քանի որ միեւնոյն քաղաքացիներն են մասնակցում ներկայացուցչական ժողովի ընտրութիւններին եւ այդ ժողովի օրինագծերը քուէարկելու ժամանակ, ուստի այդ քուէարկութիւնների հետեւանքը այն կը լինի, որ ըստ մեծի մասին թէ օրէնսդրութեան եւ թէ, այսպէս ասած, օրէնքներ կազմող ժողովի համար տրված ձայները միեւնոյնը կը լինեն: Եւ միմիայն հազւագիւտ դէպքերում, երբ կուսակցութիւններից եւ ոչ մէկը վճռական մեծամասնութիւն չէ կազմում ժողովում կամ թէ երբ այնպիսի մի կարեւոր օրէնքի մասին է լինում խնդիրը, որ ալեկոծութեան մէջ է դնում ժողովրդային մասսաներին ու քուէարկութեան է գրաւում այնպիսի անտարբեր տարրերի, որոնք մի այլ ժամանակ քուէարկութեան չեն խառնվում, ուստի եւ դժուար է դրանց հաշիւ առնել. այդպիսի դէպքերում միայն կարելի է, որ երբեմն տարբերութիւն նկատվի ժողովրդի ու ներկայացուցչական ժողովի քուէարկութեանց հետեւանքների միջեւ, եւ այդ այն պարագայում միայն, ի հարկէ, երբ ներկայացուցիչները ընտրված լինեն կատարելապէս ազատ կերպով եւ այն էլ կարճ ժամանակի շրջանի համար:

Այդ պատճառով էլ այս տողերի հեղինակը ենթադրում է, որ ինքը ոչ մի հիմք չունի ամենափոքրիկ փոփոխութիւն մտցնելու իր արդէն արտայայտած դրութեան մէջ, որը այնպէս վրդովել էր ուղղակի օրէնսդրականութեան կողմնակիցներին: Մեր արտայայտած դրութիւնը ասում է. «Մենք պէտք է անուշադիր թողնենք հիմա ժողովրդային ուղղակի օրէնսդրութիւնը: Դա չէ կարող աւելորդ դարձնել պարլամենտը, գոնէ արդի մեծ պետութիւնների մէջ, իսկ այստեղ խօսքը հէնց այդպիսիների մասին է. ժողովրդային ուղղակի օրէնսդրութիւնը կարող է միայն առանձին դէպքերում գործել պարլամենտի հետ միաժամանակ, ուղղումներ մտցնելու նպատակով: Միանգամայն անհնարին է ժողովրդային ուղղակի քուէարկութեանը թողնել ամբողջ պետական օրէնսդրութիւնը. նոյնչափ եւ անհնարին է նրան յանձնել պետութիւնը կառավարելու հոգողութիւնը, եւ, պէտք եղած դէպքում, նրան փոխելու իրաւունքը: Քանի որ գոյութիւն կունենայ արդի մեծ պետութիւնը, քաղաքական գործունէութեան ծանրութեան կենտրոնը միշտ պարլամենտում կը լինի»*):

Մենք նամանաւանդ քիչ պատճառներ ունենք այս տեսակէտից հրաժարվելու, քանի որ մինչեւ իսկ ժողովրդային ուղղակի օրէնսդրութեան կողմնակիցների փորձն էլ մեր օգտին է խօսում:

Ինչպէս որ արդի պետութեան զարգացումը անհրաժեշտութիւն դարձրեց նրա համար իր գործերը պատգամաւորական ժողովին յանձնելը, այնպէս էլ բոլոր կազմակերպութիւնները, որոնք տարածվում են պետութեան ամբողջ տերրիտօրիայի վրա, կամ մինչեւ իսկ դուրս են գալիս նրա սահմաններից, այսինքն՝ ամենից առաջ, քաղաքական կուսակցութիւնները, ստիպված եղան իրանց գործերը վարելու համար նոյն միջոցին դիմել. մեր դարը ոչ միայն պարլամենտարիզմի այլ եւ կօնգրեսների դար է: Շվէյցարիայում օրէնքները չեն արգելում սօցիալ-դեմօկրատական կուսակցութեանը Րիտտինգհաուզէնի րեցեպտով իր գործերը վարելու: Սակայն, շվէյցարական սօցիալ-դեմօկրատիան հետեւում է միւս կուսակցութիւնների օրինակին: Ի՞նչու համար Րիտտինգհաուզէնի կողմնակիցները չեն առաջարկում մեր շվէյցարական ընկերներին թողնել իրանց կուսակցական համաժողովները եւ կարգադրել իրանց կուսակցական գործերը, սեկցիաներում քննութեան ենթարկելով ու քուէարկելով: Թէ ինչու են նրանք կուսակցական համաժողովները մի ինչ որ անհրաժեշտ բան համարում, այդ ինքնըստինքեան հասկանալի է:

Ամեն տեղ սօցիալ-դեմօկրատական կուսակցական կեանքում ամենակարեւոր որոշումները մինչեւ հիմա կայանում են համագումարներում, պատգամաւորական ժողովներում. համագումարները անհրաժեշտ են համարվում նրա համար, որ կարելի լինի յաղթել բոլոր տարաձայնութիւնները եւ հեռացնել թիւրիմացութիւնները: Պատգամաւորական ժողովները անհրաժեշտ են նրա համար, որպէսզի կամ ֆրակցիօներական խըմբումները վերացնեն եւ կամ բաժանված մասերը միացնեն: Նրանք նաեւ անհրաժեշտ են եւ նրա համար, որպէսզի քննեն ու որոշեն բոլոր կարեւորագոյն սկզբունքային եւ տակտիքական խնդիրները: Տեղական կազմակերպութիւններում կատարված քուէարկութեան նպատակն է, ամենից շատը, հաստատել համագումարներում ընդունված որոշումները եւ մարդկանց ու տեղերի ընտրութիւններ կատարել: Ներկայացուցչական սիստեմը միակ միջոցն է հանդիսանում, որի միջոցով ամբողջ կուսակցութիւնը կարող է հաւաքվել, բացատրվել եւ որոշումներ ընդունել: Միայն համագումարն է հնարաւորութիւն տալիս հաւաքական կամք արտայայտել, միայն համագումարներն են կուսակցութեան մէջ ամբողջութիւն պահպանում: Մինչ սօցիալ-դեմօկրատիան ներկայացուցչական սիստեմը անհրաժեշտ կը համարի իր սեփական գործերը ներդաշնակութեան մէջ պահելու համար, նա շատ ծիծաղելի դրութեան մէջ կը դնի իրան, եթէ սկսի այդ միջոցը վնասակար եւ աւելորդ համարել պետական գործերը կարգաւորելու համար եւ պահանջի, որ նրան ոչնչացնեն:

Այդ տղայական, բայց ոչ անմեղ զուարճութիւնը մենք կարող ենք անարխիստներին թողնել. իրանց համագումարներում թող նրանք բղաւեն, թէ ներկայացուցչական սիստեմը անբարոյականութիւն է:

---

*) Էրֆուրտի ծրագիրը. եր. 220—221:

ԴԱՐՁԵԱԼ ՏՐԱՆՍՎԱԱԼԻ ՄԱՍԻՆ

Անցած տարվայ «Մշակի» համարներից մէկում Տրանսվաալին անգլիական կառավարութեան կողմից տրված սահմանադրութեան մասին խօսելով, մենք մի յետադարձ հայեացք էինք գցել անցեալ անգլօ-տրանսվաալեան պատերազմի վրա եւ այն միտքն էինք յայտնել, թէ այդ պատերազմը ոչ թէ սովորական երկու ազգերի կամ պետութիւնների պատերազմ էր, ինչպէս իր ժամանակին ընդունված էր կարծելու, այլ դա պարզապէս մի դասակարգային ներքին կռիւ էր, որը, զանազան հանգամանքների ու պայմանների շնորհիւ, պատերազմի կերպարանք էր ստացել: Եւ մենք ասել էինք, որ այդ դասակարգերն են՝ մի կողմից խոշոր կալուածատէր բօէրները, իսկ միւս կողմից արդիւնագործութեամբ՝ գլխաւորաբար հանքերի մշակումով պարապող բոլոր եկւոր տարրերը, որոնցից ամենաշատը անգլիացիներն են:

Այդ երկրից, սահմանադրութիւնը հրատարակվելուց յետոյ, լրագրներին հաղորդված տեղեկութիւնները այժմ գալիս են միանգամայն հաստատելու մեր արտայայտած հայեացքը, որ եւ մենք ուրախութեամբ արձանագրում ենք «Մշակի» էջերում:

Ահա թէ ինչ են հաղորդում Տրանսվաալից եւրոպական թերթերին այնտեղի ընտրութիւնների մասին.

«Տրանսվաալեան նոր սահմանադրութիւնը հրատարակվելուն պէս բօէրները, առանց ժամանակ կորցնելու, սկսեցին ընտրական ագիտացիա մղել: Պայքարը գլխաւորապէս Տրանսվաալի բնակիչների կալուածատիրական ու արդիւնագործական մասերի միջեւ է. կալուածատէրերը արդիւնագործներին օտար, եկւոր տարրեր են համարում, որոնք միմիայն Րանդի (հանքային շրջանի անունն է) հանքատէրերի շահերն են ներկայացնում, այլ ոչ երբէք երկրի շահերը: Բօէր կալուածատիրական կուսակցութեան ղեկավարը՝ գեներալ Բօտան՝ իր թեկնածութիւնը դնելով Րանդի շրջանում, որ տեղ նրա ընտրութիւնը կասկածից դուրս է, (անգլիացիք մինչեւ իսկ չեն համարձակվում այդտեղ իրանց թեկնածուն ներկայացնել), մտադիր է բլոկի մէջ մտնել անգլիական «Անկախ» կուսակցութեան հետ, այսինքն անգլիացի կօլօնիստ հողատէրերի կուսակցութեան հետ, որոնց համար ոսկու հանքերը մըշակող արդիւնագործների շահերը նոյնպէս բոլորովին օտար են: Գեներալ Բօտան յոյս ունի, թէ այդ բլոկին կաջողվի ընտրութիւններին այնչափ ուժեղ մեծամասնութիւն ստանալ, որ կարելի կը լինի իրանց տիրապետութիւնը ապահովել պարլամենտում եւ իրանց մինիստրութիւնը կազմել: Եթէ այդ յոյսերը իրականանան, Տրանսվաալի կառավարչական իշխանութիւնը ամենից առաջ կը սկսի արդիւնագործների դէմ կռւել, որը եւ յեղափոխութիւն կառաջացնի երկրում»:

Այլ խօսքերով, կալուածատիրութեան դէմ մաքառումը կը սկսվի նորից: Բայց կանխաւ կարելի է ասել, որ գործը այդ տեղը չի հասնի, որովհետեւ ընտրական իրաւունքները այնպիսի ձեւով են մշակված ու դասաւորված Տրանսվաալի նոր սահմանադրութեան մէջ, որ կարելի եղածին չափ հնարաւորութիւն չը տրվի կալուածատէրերին մեծամասնութիւն կազմելու պարլամենտում: Իսկ եթէ, յամենայն դէպս, հակառակ սահմանադրութեան բոլոր տրամադրութիւններին, կալուածատէր բօէրների յոյսերը իրականութիւն ստանան եւ նրանք սկսեն րէակցիա առաջացնել երկրում, դա նրանց չափազանց թանգ կը նստի, եւ, որ ամենից գլխաւորն է, այդ րէակցիան շատ կարճատեւ միայն կարող է լինել:

Խ. Ազատ

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Դերբենդ, յունվարի 14-ին

Մօտ օրերս քաղաքումս վախճանվեց Խօսրով Պապայեանը 92 տարեկան հասակում: Հանգուցեալի յիշատակը յարգելու համար փեսան եւ աղջիկը մօտ հազար րուբլու նուիրաբերութիւններ արին եկեղեցուն եւ գերեզմանատանը: Ի միջի այլոց նրանք նուիրեցին եւ յիսուն րուբլի յօգուտ Ղարաբաղի սովեալներին: Փոխադրելով յիշեալ յիսուն րուբլին խմբագրութեանդ անունով, խնդրում եմ հասցնէք ըստ պատկանելոյն եւ այդ մասին տեղեկացնէք նուիրատուներին ի [illegible]:

Տիգրան քհ. Վարդանեանց

Գուդաութ, յունվարի 9-ին

Երէկ, ամսիս 8-ին, այստեղի սիրողների խումբը ներկայացրեց վրացերէնից թարգմանված «Ղաչաղ Արսէն» դրաման եւ «Տիկինը ննջում է կամ ծերուկը կտակ է անում» ու «Երկու քաղցածներ» վօդէվիլները: Ներկայացումը զուտ արդիւնք տուեց 20 ր. 82 կ., որից հայ սովեալների օգտին մասն հանեցինք 5 ր. 82 կ., որը ուղարկում ենք յարգելի խմբագրութեանդ՝ յանձնելու համար յանձնաժողովի գանձապահին. իսկ մնացած 15 րուբլին յատկացրինք Գուդաութի եւ Անուխայի նորակազմ գրադարաններին: Ցաւում ենք արձանագրել մի տխուր փաստ, որ այստեղի հայ հասարակութեան բացարձակ մեծամասնութիւնը փայլում էր իր անտարբեր բացակայութեամբ:

Ի դիմաց սիրողների՝ Մ. Ծատուրեանց

Բագու, յունվարի 10-ին

Հոկտեմբերեան մանիֆեստից յետոյ Բագու եկաւ մեզ մօտ մի պարոն, Ալէքսանդր անունով, առաջարկեց մեզ բաժնորդ գրվել մի թերթի, որը լոյս պէտք էր տեսնի Բագւում

«Փոթորիկ» անուան տակ։ Տալով տասը րուբլի ստացանք անդորրագիր. մինչև օրս սպասելով, ստիպված եղայ լրագրի միջոցով հարց տալ լրագրի հիմնադիրներին՝ ինչու այսքան ուշացրին, կամ թէ ինչու չեն բաւաբարութիւն տալիս բաժանորդ գրողներին։

Սեդրակ Ունանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք Կաղզւանում՝ Շուշու և Կովկասի աղէտեալների օգտին՝ պ. Մկրտիչ Յովհաննիսեանի տանում հացկերոյթին մասնակցող հիւրերից ժողոված 30 ր. 50 կոպ.։ Նուիրատուներն են՝ 1) Ստեփան Սարգսեանց 3 ր., 2) Ալեքսան Թէոսեանց 1 ր., 3) Արշակ Ստեփանեանց 1 ր. 50 կ., 4) Ղուկի Սհակեանց 3 ր., 5) Մարտիրոս Սարգսեանց 1 ր., 6) Պետրոս Զաքարեանց 15 ր., 7) Մկրտիչ Յովհաննիսեանց 5 ր., 8) Բաղդասար Աբալեանց 1 ր.։ Գորիսի սովեալների օգտին՝ Բագրատ Գէորգեան Քոքաչեանցի որդու մկրտութեան հանդէսին Նուէթլուղի Ալէքսանդր աւ. քահանայ Վարդանեանցի միջոցով հաւաքած 12 րուբլի։

—

Թեմակալ առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանը տեղեկացրել է Փոխարքայի դիւանատան, որ հայկական նոր եկեղեցական դպրոցներ բացվել են Մանգլիսում, Ղազախի գաւառի Կալաչա գիւղում և Գանձակի գաւառի Միրզիկ գիւղում։

—

Յունվարի 17 ին Թիֆլիսի քաղաքագլուխ իշխ. Ջերբէզովը քաղաքային վարչութեան նիստին յայտնել է անտառային-պարտիզպանական մասնաժողովի նախագահ, Թիֆլիսի քաղաքային դումայի նախկին ձայնաւոր՝ բժ. Ն. Ա. Խուդադովի մահը, որ եղել է յունվարի 17-ին, և ձայնաւորների յայտարարութիւնը՝ Թաղել հանգուցեալին, համաձայն նրա կամքի, քաղաքային ատաղձաշահագործական ամարանոցում։ Լսելով ձայնաւորների յիշեալ յայտարարութիւնը և ուշադրութեան առնելով, որ հանգուցեալի մահից յետոյ քաղաքային դուման չէ կարող գումարվել, քաղաքային վարչութիւնը որոշում է. 1) խնդրամատոյց լինել իշխանութեան Թաղելու հանգուցեալին քաղաքային ատաղձաշահագործական ամարանոցում, 2) ցաւակցութիւն յայտնել ընտանիքին քաղաքային ինքնավարութեան կողմից, 3) հանգուցեալի դագաղի վրա դնել պսակ քաղաքային ինքնավարութեան կողմից, 4) Թաղմանը ներկայ լինի քաղաքային վարչութիւնը լիակատար կազմով և 5) վերոյիշեալի մասին զեկուցել քաղաքային դումային նրա հենց առաջին նիստում։

—

Թագաւոր Կայսրը բարեհաճել է հրամայել Ֆենդի-Բէյային ճանաչել Թիւրքաց գեներալ-հիւպատոս Թիֆլիսում։

—

Ստացանք հետևեալ գրքերը. 1) Ա. Պալեանի «Հիւլէ», տպված է Գահիրէում, 52 երես, գինն է 50 սանտիմ. 2) Զաք. Գրիգորեանցի «Բնագիտութիւն», համառօտ դասընթաց 57 պատկերով, 177 երես, գինն է 50 կոպէկ. 3) Եակ. Գոգէբաշվիլիի «Ի՞նչ արաւ օրօրոցի երգը» Թարգ. վրացերէնից Ղ. Կ.-ի 31 երես, գինն է 10 կոպէկ։

—

Հաստատութիւն են գտել Թիֆլիսում հաստատված «Թիֆլիսի սպասաւորների փոխադարձ օգնութեան ընկերութիւնը» և «Ժողովրդական համալսարանների Թիֆլիսի ընկերութեան» կանոնադրութիւնները։

—

Մի քանի տարի առաջ տեղական հրէաների միջնորդութեան համաձայն, Թիֆլիսի նահանգական վարչութիւնը Թոյլատրել էր Թիֆլիսի տեղական հրէաների սինագոգին կից հիմնել հոգևոր վարչութիւն։ Նահանգական վարչութեան այդ որոշումը բողոքի հանդիպեց Կովկասի քաղաքացիական մասի նախկին գլխաւոր հրամանատար իշխ. Գոլիցինի կողմից։ Թիֆլիսում ստացված տեղեկութիւնների համաձայն, սենատը բեկել է նախկին գլխաւոր հրամանատարի վճիռը, իբրև ապօրինի։

—

Յունվարի 17-ին դասադուլ են արել տեխնիքական դպրոցի 1-ին դասատան աշակերտները, պահանջելով անյապաղ բանալ յիշեալ դպրոցի փակված 2-րդ և 3-րդ դասարանները։ Այդ դպրոցի աշակերտներից 4 հոգին ձերբակալված են։

—

Այսօրվանից բացվելու է Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի հրամանով փակված «Образованіе» գրախանութը։

—

Յունվարի 17-ին, Պեսկովսկի փողոցի վրա, գզգզողների խանութ ունեցող Մերաբովի մօտ մտնելով երկու հոգի, ատրճանակներով սպառնալով փող են պահանջում։ Աւազակներին վրա են հասնում մօտիկ կանգնած ոստիկանները և ձերբակալում են երկուսին էլ։

—

Յունվարի 17-ին, երեկոյեան ժամը $8^1/_2$-ին, Նեմէցկի և Միխայլովսկի փողոցների անկիւնում, երբ պահնորդական բաժնի պաշտօնեայ Շիպելը դուրս է գալիս եղել Միքայէլեան հիւանդանոցից, անյայտ անձինք կրակել են նրա վրա, սակայն անհետևանք։

—

Յունվարի 17-ի երեկոյեան, Պանասէվիչի փողոցում, մի քանի չարագործներ յարձակվում են Թիֆլիսեցի Իվան Տորոշլինի վրա և հասցնում են նրան մի քանի վէրքեր։ Վիրաւորվածին տարել են Միքայէլեան հիւանդանոցը։ Չարագործները անյայտացել են։

—

Բժիշկ Ն. Ա. Խուդադովին վիրաւորելու գործում իբրև մեղսակիցներ կասկածով ձերբակալված են հեռագրական վարչութեան պաշտօնեայ Մօլչանովը (սխալմամբ տպված էր Բօլչակով) և երկու լեզգիներ։

—

Թիֆլիսի նահանգապետը Թոյլատրել է Յակոբ Տրաչևսկուն քաղաքային դումայի դահլիճում երկու դասախօսութիւն կարդալ հետևեալ նիւթերի մասին. 1) հրէական տնտեսութեան պրօբլէմները և 2) ազգային հարցը։ Այդ դասախօսութիւնները լինելու են առաջինը շաբաթ, յունվարի 20-ին, երեկոյեան ժամը 7-ին, իսկ երկրորդը կիրակի, առաւօտեան ժամը 11-ին։ Պատասխանատու կարգադրիչ հանդիսանում է ատամնաբոյժ Լէօպօլդ Լվովիչ Շորէյսէր։

—

Ազնուականներ՝ Գ. Զախարիձէն, Զ. Ն. Զանուկիձէն իբրև վնասակար անձնաւորութիւններ հասարակութեան համար, Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի հրամանով աքսորվում են Թիֆլիսի գեներալ-նահանգապետութեան սահմաններից։

—

Թիֆլիսի գեներալ-նահանգապետը առաջարկել է պ. ոստիկանապետին յայտնել ի գիտութիւն Թիֆլիս քաղաքի առևտրական-արդիւնաբերական հաստատութիւնների տէրերին, որ այս տարվայ համար առևտուր անելու առևտրական վկայականներ ձեռք բերելու ամենավերջին ժամանակամիջոցը նշանակված է փետրվարի 1-ը, որից յետոյ՝ այն առևտրական հաստատութիւններում, որոնք չեն ունենայ առևտրական վկայականներ, կարգելվի առևտուր անել, և այդ պահանջը կառաջադրվի 1906 Թ. յունվարի 17-ին այդ խնդրի նկատմամբ հրատարակած պարտադիր կանոնների համաձայն։

—

Քութայիսի գեներալ-նահանգապետի կարգադրութեան համաձայն ադմինիստրատիվ կարգով Վեատսկի նահանգն են աքսորվում 5 հոգի։

—

Բագուի լրագիրների աշխատակիցների խումբակը (Պէտրիմիստ, Բայան, Իպլա, Ն. Դ. Սարգրսեան, Բ. Սերգէեվ, Գորին, Մ. Ի. Շչէկլանով, Պ. Մ. Կարա-Մուրզա, Ա. Ա. Էնգէլ, Ա. Ֆ. Պէնտկովսկի, Ն. Գ. Բայդրէնկօ, Ա. Բ. Վէզիրով) հրատարակելու է հասարակական և գրականական-երգիծաբանական մի ժողովածու՝ «Նօժէժկա» անունով։ Զուտ արդիւնքը լինելու է Բագուի գիշերային ապաստարանի օգտին։

—

Յունվարի 14 ին Բագու քաղաքում, երեկոյեան մօտ ժամը 7-ին, հետևեալ ոստիկանների և անյայտ անձանց միջև Կրասնովոդսկի և Մոլոկանսկի փողոցների անկիւնում տեղի է ունեցել հրացանաձգութիւն։ Դէպքը կատարվել է այսպէս. հսկելու նշանակված երեք ոստիկանները ձիով անցնում են Կրասնովոդսկի փողոցով. Ոստիկանութեան տեղեկութիւնների համաձայն, նրանք չէին հասել մինչև Տորգովայա փողոցի անկիւնը, երբ նրանք հանդիպում են 7 անյայտ մարդկանց, որոնք և սկսում են նրանց վրա կրակ պարպել։ Սկսվում է տաք հրացանաձգութիւն, որի ժամանակ ոստիկաններից մէկը վիրաւորվում է մէջքից, որից յետոյ չարագործները անյայտանում են մօտ գտնվող «Սեվաստոպոլ պանդոկում»։ Վերջինի մէջ ոստիկանութիւնը խուզարկութիւն է կատարում, սակայն անհետևանք։ Պանդոկը ժամանակաւորապէս փակ է։ Առ այժմ կասկածով բռնված են երկու հոգի—հայ և ռուս, որոնցից առաջինը Զանգեզուրի գաւառի Վաչագան գիւղացի Ս. Սարգսեանն է։ Վերջինի անձնաւորութիւնը դեռ չէ պարզված։

—

Այս յունվարի վերջում, Նախիջևանում, Երևանի նահանգական դատարանի շրջող մասնաժողովը քննելու է այն 20 մահմեդականների գործը, որոնք մեղադրվում են 1905 Թ. Նախիջևանում տեղի ունեցած հայ-Թուրքական կոտորածին մասնակցելու մէջ։ Ուժ Հաջի-Աբդուլ-Ալի Շէյխ-Զադէն «Իրշադին» ուղղած մի նամակով դիմում է Կովկասի բոլոր մահմեդական իրաւաբաններին, խնդրելով իրանց վրա վերցնել այդ, ինչպէս ասված է նամակում, ոչ մի բանում մեղք չունեցող մարդկանց պաշտպանութիւնը։ Նամակը վերջանում է այսպէս. «այդ գործը ժողովրդական գործ է, և որի մէջ կայ սէր դէպի ժողովուրդը, թող ասպարէզ դուրս գայ։ Նրանց աշխատանքը իզուր չի անցնի ․․»։

—

«Իսարի» լրագրի խմբագիր-հրատարակիչ Ի. Մչէդլիշվիլին խնդրամատոյց է եղել Թիֆլիսի նահանգապետին Թոյլատրել նրան հրատարակել Թիֆլիսում վրացերէն լեզուով շաբաթաթերթ՝ «Դրօէբա» (Ժամանակ) անունով, ամենամեայ յաւելուածով։

—

Մ. Մէրաբովան դիմել է Թիֆլիսի նահանգապետին և խնդրել է Թոյլատրել նրան հրատարակել Թիֆլիսում ռուսերէն և հայերէն լեզուներով Թատրոնական-գեղարուեստական շաբաթաթերթ «Суфлеръ-Ушараръ» անունով։

—

Դադարեցրած «Աշխատանք» շաբաթաթերթի խմբագիր-հրատարակիչ Ա. Աթանասեանը Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի հրամանով արձակվել է բանտից 300 րուբլի գրաւականով։

—

Սուխումի վիճակի Եկատերինսկի գիւղի Գուլիստանի Թաղամասում, յունվարի 8 ին, երեկոյեան ժամը 8 ին, հասարակական ջրաղացն է մտնում բաց դռներից մի անյայտ զինված անձնաւորութիւն և հրացանով սպանում է ջրաղացպան Իբրահիմ Իւսիֆ Ահմէդ օղլու որդի Բէշիրին և վիրաւորելով հենց իրան, ջրաղացպանին, անյայտանում է։

—

Գորու գաւառի Սուրամի հրէայ ազգաբնակութիւնը, յանցաւորներին Թագցնելու համար, 500 րուբլի տուգանքի է ենթարկված։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը, սանիտարական ստատիստիկան աւելի կանոնաւոր դրութեան մէջ դնելու նպատակով, մշակել և արդէն բժշկական խորհրդի քննութեան է ներկայացրել մի նախագիծ, որի համաձայն կայսրութեան բոլոր նահանգներում, գաւառներում և մի քանի քաղաքներում պարտաւորապէս ցուցակագրվելու են ազգաբնակութեան մահվան պատճառները։

—

Ներքին գործերի մինիստրի օգնական Գուրկոն վերջին ժամանակներս դեռ իր պաշտօնից չի հեռացված։ Ներքին գործերի մինիստրական Թղթերը, բացի մատակարարողական գործի վերաբերեալ, յունվարի 7-ին և 8-ին ուղարկված էին նահանգապետներին Գուրկոյի ստորագրութեամբ։ («Вѣкъ»)

—

Ոստիկանական դեպարտամենտը, «Бирж. Вѣд.» լրագրի ասելով, ձեռք է բերել մի ցուցակ, որի մէջ մտցված են բիւրօկրատական բարձր շրջանների պատկանող 57 անձանց անուններ, որոնք արդէն մահվան են դատապարտված։ Այդ ցուցակներից գտնված են մի քանի օրինակ և միմեանց են։ («В.»)

—

«Волынь» լրագիրը հաղորդում է, որ Տիրասպոլի գաւառի Սլոբոդզից գիւղում ոստիկանութիւնը հրապարակ էր հանել ծախելու այդ գիւղացիների գոյքը, որոնք չէին վճարել պետական հարկերը։ Վաճառքի հանված իրեղէնների մէջ եղել են գիւղատնտեսական գործիքներ, անասուններ, տնային իրեղէններ և նոյն իսկ բարձեր։ Երեք բան ծախելուց յետոյ ժողովուրդը հաւաքվելով արգելեց ծախել, և յետոյ «կեցցէ» աղաղակներով ժողովեց բոլոր իրերը և տարաւ տիրոջ տունը. վաճառումը այդպիսով չը կայացաւ։

—

Տուրքեստանի երկրից «Сегодня» լրագրին հաղորդում են սաստիկ յուզիչ լուրեր։ Սարսափելի ցուրտ է։ Նոյն իսկ փողով չէ կարելի ձեռք բերել ոչ փայտ և ոչ էլ հաց։ Քաղաքական աքսորականները Թշուառ կացութեան մէջ են։ Նոյնպիսի լուրեր էլ ստացվում են Ալէքսանդրեան կենտրոնական բանտից։ Փող բաց են Թողնվում քիչ քանակութեամբ, այն էլ ոչ կանոնաւոր կերպով։ Ամենից սարսափելին այն է, որ այնտեղ իշխում է ցինգա հիւանդութիւնը։ Աքսորականներն անմիջական օգնութեան մեծ կարիք ունեն։

—

Յունվարի 11-ին Պետերբուրգի պօլիտեխնիքական ինստիտուտում սկսվել է գարնանային սեմեստրի դասախօսութիւններին գրվելը։ Դասախօսութիւնները կը սկսվեն յունվարի 15-ից։ Պրոֆեսորների խորհուրդը առաջարկել է ինստիտուտից նպաստ խնդրող ուսանողներին դիմել ուսանողական փոխադարձ օգնութեան դրամարկղի բիւրօյին։ («Сегодня»)։

—

«Бирж. Вѣд.»-ն հաղորդում է, որ վերջին ժամանակներս զէմսկի բաժանմունքին վերաբերեալ բոլոր Թղթերը, բացի մատակարարողական գործին վերաբերեալ Թղթերը, որոնց ստորագրում էր իսկական խորհրդական Գերբէլը, ուղարկվում են ամեն օր կամերհէր Գուրկոյին տունը ստորագրելու, իսկ մնացող Թղթերը ուղարկում են կարգադրելու՝ ինչպէս և առաջ՝ իսկական խորհրդական Լիխվինովին։

—

Յունվարի 10-ին, ցերեկվայ ժամը 2-ին, գործադուլ են արել մայրաքաղաքը լուսաւորող գազի ընկերութեան բանւորները։ Գազի մնացած մի փոքր պաշարը հնարաւորութիւն տուեց երեկոյեան կիսով չափ գոնէ լուսաւորել քաղաքը։ Յունվարի 11-ին բանւորները դեռ ևս համաձայնութիւն չէին եկել։ Գիշերը կալանաւորվեցին մի քանի բանւորներ, որոնց մէջ և Գլազունովի գազի գործարանի Պետական Դումայի համար ընտրված լիազօրները։ Առաւօտեան ոստիկանութիւնը դիմեց ամենածայրայեղ միջոցների աշխատանքները վերսկսելու համար։ Ոստիկանութիւնը տներում մէկ մէկ որոնում էր բանւորներին և կանչում գործարան։ Երբ ժողովվեցին նոյն օրվայ աշխատանքների հերթական բանւորները, նրանք պահանջեցին ազատել կալանաւորված ընկերներին և հրաժարվեցին վերսկսել աշխատանքները, մինչև լիակատար բաւարարութիւն չը տրվի նրանց հետևեալ պահանջներին. խմելու մաքուր ջուր տալ (մինչև այժմ գործ էր ածվում ջրանցքի կեղտոտ ջուրը), աւելացնել աշխատավարձը, հիւանդներին խնամել և տալ բժշկական օգնութիւն, տալ բնակարանի վարձ։ Գործարանի դռները փակ են. այնտեղ բաւականաչափ ոստիկանութիւն կայ։ Բանւորների աշխատանքները մասնագիտական բնաւորութիւն կրելու պատճառով հնար չը կայ նրանց փոխարինելու։ Եթէ չաջողվի համաձայնութիւն կայացնել, մայրաքաղաքը ստիպված կը լինի առանց լոյսի մնալու, ինչպէս և եղել է յունվարի 11-ին։ («Сегодня»)

—

«Новь» լրագիրը հաղորդում է, որ յունվարի 10 ին Լիդվալը գանգատ է ներկայացրել ընդհանուր դատարանին, որով գանձարանից պահանջում է $2^1/_2$ միլիոն րուբլի։ Դատաստանական ծախսերը, որոնք բաւականին խոշոր գումար են կազմում, նա լիովին ներկայացրել է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՒՐՔԻԱ

Կրուպի ֆիրման եւ օսմ. կառավարութիւնը.—Լրագիրները հաղորդում են, որ, սուլթանի հրամանով, կայսերական դիւանատունը Կրուպի ֆիրմային հեռագրով յայտնել է, որ պատրաստէ յանձնելու այն արագահարուած Թընդանօթները, որ Թիւրք կառավարութիւնը վաղուց էր յանձնարարել յիշեալ ֆիրմային։ Ասում են, որ հեռագրական այդ կարգադրութիւնն արդիւնք է այն տեղեկութեան, որի համաձայն, իբր Թէ, Կրուպի ֆիրմայի Կ. Պօլսի ներկայացուցիչն աշխատում է օսմ. Թնդանօթարանի վարչութեան շլինքին փաթաթել հին սիստեմի այն արագահարուած Թնդանօթները, որ յիշեալ ֆիրման Չիլիի հասարակապետութեանն էր ուղարկած, բայց վերջինս մերժել էր ընդունել։

Մակեդոնացի յեղափոխականներ մատնիչի դէմ.—Սելանիկից հաղորդում են «Indep. Belge» լրագրին, որ կապիտան Ստոյանը, որը մակեդոնական կոմիտէի ամենաազդեցիկ ղեկավարներից մին էր մինչև այժմ, վերջերս կաշառվել է Թիւրք կառավարութիւնից և իր ընկերներին մատնել։ Նա կոմիտէի ամբողջ Թղթերը յանձնել է կառավարութեանը, այսպիսով հնարաւորութիւն տալով վերջինիս ձերբակալելու կոմիտէի անդամներին։ Բացի դրանից նա, ոստիկանութեան առաջն ընկած, տարել ցոյց է տուել այն տեղերը, ուր գտնվում էին կազմակերպութեան ռազմամթերքները։ Մակեդոնիայի ընդհանուր-կառավարիչ Հիլմի փաշան Ստոյանին 500 օսմ. ոսկի վարձատրութիւն է տուել և լրտեսի պաշտօն է յանձնել։ Սակայն, նորագոյն տեղեկութիւնների հիման վրա, Ստոյանը վերջերս, երբ Թիւրք ոստիկաններին առաջնորդում էր դարձեալ ռազմամթերքների մի պահեստատեղը ցոյց տալու, անտառով անցնելիս, արձակված հրացանի մի գնդակով տեղն ու տեղը մահացել է։

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յարձակում թիւրք հիւպատոսի դէմ.—«Polit. Correspondenz» լրագրին հաղորդում են, որ Լարիսսայի օսմանեան հիւպատոսը, քաղաքին մօտիկ գտնված իր ագարակը գնացած միջոցին, յարձակման ենթարկվեց զինված մարդկանց կողմից։ Յունական կառավարութիւնը խիստ քննութեան է ձեռնարկել այդ չարագործութեան հեղինակներին գտնելու համար։

Յոյն թիւրքական յարաբերութիւններ.—Աթէնքի Թիւրքական ներկայացուցիչը Յունաստանի Գէորգի Թագաւորի կողմից ունկնդրութեան ընդունվեց, որի միջոցին Թագաւորը վստահեցրել է նրան, որ ինքն ամեն ջանք գործ պիտի դնէ Յունաստանից Մակեդոնիա անցնող հրոսակախմբերը դադարեցնելու համար։ Յունաստանի արտաքին գործերի մինիստրը հրամայել է Մակեդոնիայի յունական հիւպատոսներին, որ սրանք հաղորդեն տեղացի բնակիչներին ձեռք վերցնելու հրոսակախմբերին օգնութիւն ցոյց տալուց։

ԲՈՒԼՂԱՐԻԱ ԵՒ ՌՈՒՄԻՆԻԱ

Ռումինօ բուլղարական յարաբերութիւններ.—Վերջերս բաւականին լաւացել են շնորհիւ այն տեսակցութեան, որ նորերումս կայացաւ Բուլղարիայի Ֆերդինանդ իշխանի և Ռումինական Կարոլ Թագաւորի մէջ։ Այդ մտերմական տեսակցութեան առիթով ռումինական «Adever.» լրագիրը հետևեալն է հաղորդում. «Ռումինօ-յունական և յոյն-բուլղարական միջադէպները պատճառ դարձան Ռումինօ բուլղարական մերձեցմանը։ Այդ մերձեցումը պարտաւորեցնում է մեզ միաբան և միասիրտ կերպով պայքար մղել ընդհանուր Թշնամուն դէմ։ Ներկայումս, Մակեդոնիայի կուցօ-վալախների հարցի վերաբերմամբ, անկարելի է յունական կառավարութեան հետ համաձայնութիւն կայացնել, որովհետև Յունաստանի պրեմիեր մինիստրը յունական պարլամենտում պաշտօնապէս յայտարարել է այդ մասին։ Այսպիսով, ուրեմն, անհրաժեշտ է ուրիշ միջոցի դիմել՝ Մակեդոնիայում գոնէ մասամբ աջողութիւն ձեռք բերելու համար։ Այդ միջոցը կայանալու է ռումինօ-բուլղարական սրտագին յարաբերութեան մէջ, որից Բուլղարիան նոյնպէս շահվելու է անպայման։ Յայտնի է, որ բուլղարական իշխանապետութիւնը յարմար առիթի է սպասում իր անկախութիւնը և Արևելեան-Ռումելիի վերջնական միացումը յայտարարելու համար, նոյնիսկ պատերազմի գնով։ Նրա այդ ցանկութեանն արգելք էր լինում միայն մի ծանր մտահոգութիւն։ Այդ մտահոգութիւնը կայանում էր նրանում, որ Բուլղարիան, իր ցանկութիւնը կատարված տեսնելու համար Թիւրքիայի հետ պատերազմի բռնվելու դէպքում, վախենում էր, որ Ռումինիան օգնութեան հասնի Թիւրքիային։ Սակայն ռումինօ-բուլղարական համաձայնութիւնը այդ կասկածները վերջնականապէս փարատում է»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

17 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվարի։ Նշանակվում են, փոխ-ծովապետ Բօստրէմը՝ ծովային մինիստրի օգնական, Կրօնշտադի նաւահանգստի շտաբի կառավարիչ փոխ-ծովապետ Եակովլէվը՝ ծովային գլխաւոր շտաբի կառավարչի պաշտօնակատար, «Слово» զրահանաւի հրամանատար առաջին կարգի կապիտան Ռուսինը՝ նաւերի նաւաստիների հրամանատար, մնալով իր պաշտօնում։

Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, Պետերբուրգի էլէքտրոտեխնիքական ինստիտուտում խուզարկելու ժամանակ ոստիկանութիւնը գտել է մի շրջանակ—նորակոչ զինւորներին ուղղած Թռուցիկների տպարանական տառերով, երկու նաքոր տառեր, մի շիշ տպարանական ներկով, օտար անցաթղթեր, Պետերբուրգի վիճակի զինւորա-յեղափոխական կազմակերպութեան կնիքը, ընկալագրեր նոյն կազմակերպութեան օգտին ժողովարարութիւն անելու համար, 4000-ից աւել յեղափոխական բովանդակութեամբ Թռուցիկներ, 17 կապոց տպարանական տառեր, 2 սրեր, ռումբեր պատրաստելու 8 կաղապարներ, կարմիր դրօշակ «Հող և Ազատութիւն» մակագրութեամբ։

ՕԴԵՍՍԱ, 17 յունվարի։ Ի նկատի առնելով, որ քաղաքում օրէցօր Թռուցիկներ են ցրում, որոնցով սպառնում են պայթեցնել շոգենաւերը և սպանել կապիտաններին, նաւահանգստում կանգնեցրած են զինւորներ և կօզակներ։

Բանկերը պաշտպանող զինւորների Թիւը կրկին աւելացվեց։

ԲԵՐԼԻՆ, 17 յունվարի։ Կայսրը յանձնարարել է պրինց Ֆրիդրիխ Լէօպոլդին՝ այցելել Րեդէնի դժբաղդութեան տեղը, հետազօտել ամեն բան մանրամասն կերպով և անձամբ զեկուցում տալ վնասվածների դրութեան մասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվարի։ Ծովային մինիստրութիւնը մտադիր է սև-ծովեան նաւատորմղի ցանկից հանել իրանց դարն անցրած «Չէսմա» զրահանաւը և «Պամեատ Մերկուրիա» ականանաւը։

—

Հեռագրական գործակալութիւնը յայտնում է, որ հեռագրաթելերի փչանալու պատճառով հերթական հրահանգները չեն ստացվել։

18 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 յունվարի։ Ծովակալութեան խորհրդի անդամ Գիլտէնբրանդը նշանակված է 1905 Թ. մայիսի 14 ին տեղի ունեցած Ցուսիմի կռուի հանգամանքները բազմակողմանի կերպով պարզող մասնաժողովի նախագահ։

ԼՈՆԴՈՆ, 16 յունվարի։ Սիբիրիայում հաշւել են ժանտախտի 14 դէպք։ «Սիբերիան-Պրօպրիէտր» անգլիական ընկերութեան վարչութիւնը տեղեկութիւն ստանալով, որ իշխան Խիլկովին Թոյլատրած է վարչութեան անդամ գրվել, ընտրել է նրան վարչութեան վերատեսուչ և ի յիշատակ ռուս մարդու իրանց մէջ ընդունելուն, յատկացրել է 15 հազար րուբլի՝ անբերրիութիւնից վնասված ազգաբնակութեան օգտին։

ՄՈՍԿՎԱ, 16 յունվարի։ Համալսարանում պարապմունքները վերսկսվեցին։ Ամեն ինչ հանգիստ է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվարի։ Առաւօտեան ժամը 11-ին սպանվեց բերդի կառավարիչ Գուդիման։

Մինիստրների խորհուրդը որոշել է Նովօչէրկասկում բանալ պօլիտեխնիքական ինստիտուտ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվարի։ Խնդրագրի համաձայն պաշտօնից արձակված է արդարադատութեան մինիստրի օգնական Սօլլէրտին-Լիւցէն նշանակվում է արդարադատութեան սկին։ Սենատոր մինիստրի օգնական։

ԻՎԱՆՈՎՕ-ՎՈԶՆԷՍԷՆՍԿ, 17 յունվարի։ Սրտի պայթումից վախճանվեց Պետական Խորհրդի ընտրեալ անդամ Նասէնկին, որ վարում էր առևտրի և արդիւնաբերութեան Մոսկվայի խորհրդի նախագահի պաշտօնը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 Թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վերաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—$1^1/_2$—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ե. Գուրդենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—$6^1/_2$—$7^1/_2$ ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Միխիթարեանց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8։ Կանանց համար 12—1 ժամը։
Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Պասկեվիչի փողոցների,, № 33/15։
(ա. օ.) 91—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԶԳԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ.
Տելեֆոն № 1087
Սօլօլակ, Լերմոնտովսկայա փող., 16.
(ա. օ.) 87—150

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԷԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա, Սեմեոնովսկի փողոց № 16։
(ու. կ. չ.) 11—20

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւնների։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առաւ. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36
51—100

Մի հայուհի ցանկանում է ունենալ կօնտորշչիկի, գործակատարուհու, կասսիրշայի պաշտօն մագազիններում կամ կօնդիտերսկում, կամ ընտանիքում բոննայի պաշտօն վարել։ Հասցէն՝ Բեբուտովսկի փողոց, № 5, Աղախանեան։
2—3

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“
Գրավաճառանոցի հրատարակութիւն
Լոյս տեսաւ Սեդրակ Մանդինեանի կազմած
начальная русская
христоматія
для армянъ
դասաւանդութեան բացատրութիւններով
1. գրքոյկ
Գրքոյկը նոր ծրագրի համեմատ նշանակված է ծխական ուսումնարանների 3-րդ բաժանմունքի համար, բայց առայժմ կարող է գործածվել նաև 4-րդ բաժանմունքում կամ Թեմական դպրոցի առաջին դասարանում։
9—10

Գիմնազիայի բարձր դասարանի մի աշակերտ ցանկանում է դասեր ունենալ. մաթեմատիկայից կարող է պատրաստել մինչև 7-րդ դասատուն։ Հասցէն՝ Водоподъемная, 9, близъ Коммерч. училища. (ու. կ.) 3—3

„Գուտտենբերգ“
գրավաճառանոցում վաճառվում են
1) Լևոն Սարգսեանի, «Ժողովրդի կրթութիւնը մեզանում», 1892 Թ., գինն է 20 կոպ.։
2) Լևոն Սարգսեանի, «Հին ցաւ» (հրապարակախօսական խոհեր). 1900 Թ., գինն է 30 կոպէկ։
3) Լևոն Սարգսեանի, «Մի քանի օր Արցախում և Սիւնիքում», 1904 Թ., գինն է 20 կոպէկ։
4) Լևոն Սարգսեանի և Կ. Կուսիկեանի, «Մայրենի խօսք» ընթերց. ձեռնարկ, հայերէն-ռուսերէն բառգրքով, գինն է 75 կոպէկ։
5) Սարգիս Սարգսեանի, «Լեզուաբանական հետազօտութիւն Ագուլեցոց բարբառի մասին», 2 րուբլի։
6) Բժ. Գարեգին Սարգսեանի, «Վնասակար և օգտակար միկրօբներ»,գինն է 20 կ.։
7) Առանձարի, «Վշտի ծիծաղը», գինն է 70 կ.։
8) Ս. Դանիէլբէգեան, «Կանանց հարցը», գինն է 70 կոպ.։
9) Զ. Մօլիէր, «Հաջի Բաբայի արկածները», 2 հատոր, գինն է 3 ր. 50 կոպ.։
—
Նոյն տեղ ընդունվում է «Մուրճ» ամսագրի 1907 Թ. բաժանորդագրութիւնը։
3—10

Лучшее для зубовъ.
ОДОЛЬ
Цѣна 1 Р. 50 К.

Ով ուզում է, որ իր ատամները առողջ մնան, պէտք է ի նկատի ունենայ, որ այդ նպատակին կարող է հասնել միայն սիստեմատիկ կերպով ամեն օր նրանց մասին, հոգալով։ Դրա համար անպայման անհրաժեշտ է, որ ատամները հականեխական միջոցով ողողվեն։ Այդպիսին էլ հանդիսանում է «Օդօլ» հականեխական միջոցը, որի վերաբերմամբ գիտական ճանապարհով ապացուցված է, որ նա միանգամայն յուսալի կերպով ատամը քայքայող բոլոր գործողութիւնների առաջն առնում է։ Բացի դրանից «Օդօլը» ունի և հիանալի Թարմացուցիչ համ։ «Օդօլը» վաճառվում է դեղատներում և բոլոր լաւագոյն դեղագործական խանութներում։ ½ շիշը, որ կը բաւէ մի քանի ամիս, արժէ 1ր. 50 կ։
(253959) (18) 1—1

Զաք. Գրիգորեանցի
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ
Լոյս տեսաւ
1) «Բնագիտութիւն»—համառօտ դասընթաց բնական գիտութիւնների՝ կենդանաբանութիւն, հանքաբանութիւն և բուսաբանութիւն. ա. տարվայ դասընթաց. աշխատասիրեց Զաք. Գրիգորեանը, 2-րդ տպագրութիւն 1906 Թ., գինն է 50 կոպ.։
2) Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի նոյն Զաք. Գրիգորեանցի կազմած «Մարդակազմութիւն» դասագրքի 2-րդ, աւելի ընդարձակված և բազմաթիւ պատկերներով հրատարակութիւնը։
(չ. ու. չ.) 2—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ,
որը աւարտել է Թիֆլիսի քաղաքային դպրոցը և հաշուապահութիւն, ցանկանում է ճաշի և սենեակի փոխարէն դասեր ունենալ հայերէն և ռուսերէն լեզուներից։ Հասցէն՝ Большая Ванкская № 1 отъ 9—12 утра и 3—6 вечера, հարցնել Մարգարեանին։
(չ. ու. կ.) 2—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
երկրորդ տպագրութեամբ
Թուաբանական խնդիրներ
և օրինակներ
Մոսկվայի քաղաքային դպրոցների ուսուցիչների
Փոխադրեց և յարմարեցրեց հայ դպրոցների ծրագրին
ՍՐԲԱԿ ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆ

Ա. պրակ. Առաջին և երկրորդ տարի	30 կ.
Բ. պրակ. Երրորդ տարի	30 կ.
Գ. պրակ. Չորրորդ տարի (1 դասարան)	30 կ.

Մամուլի տակն է շուտով, լոյս կը տեսնի
Դ. պրակ Կոտորակներ—ըստ Շապոշնիկովի և Վալցովի։
Դիմել՝ «Գուտտենբերգ» գրախանութին կամ ինձ Тифлисъ, Абасъ-Абадская площадь домъ Теймуразова-Спарапетяну.
Գումարով գնողներին զեղչ։
8—10

Առևտրի և արդիւնաբերութեան տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ., տուն. № 24/4.)
Զբաղմունքների սկիզբն է նոր ընդունվածների հետ յունվարի 10-ից։ Խնդիրների ընդունելութիւնը ամեն օր 4—7 ժամը։ Կանոնները և ծրագիրը տրվում են և ուղարկվում են ձրիապէս։
ԿՈՒՐՍԵՐ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ
Մանրամասն տեղեկութիւնների համար դիմել կուրսերի հիմնադրին, առևտրական գիտութիւնների կանդիդ. Տ. Փիլոյեանին։ (օր. մ.) 9—10

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатная, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 6